# Ազգ
Azg

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 176 (4556)

ISSN: 1829-1651

9 771829 165003 10176


## Կիբեռպատերազմ Իրանի դե՞մ

**Վերջերս հայտնված համակարգչային վիրուսը՝ ինքնավերարտադրվող «որդը» արագորեն տարածվում է ողջ աշխարհի արդյունաբերական համակարգչային ցանցերում: Լոնդոնի The Independent թերթը նշում է, որ Stuxnet կոչվող որդը այնքան բարդ է, որ, վերլուծաբանների կարծիքով, կարող է հովանավորվել միայն պետական մակարդակով: Այդ գերվիրուսը հայտնաբերվել է Ինդոնեզիայի, Հնդկաստանի, Պակիստանի համակարգիչներում, բայց ամենից շատ՝ Իրանում: Որդի հավանական թիրախները կարող են լինել Բուշեհրի եւ Նաթանցի միջուկային օբյեկտները: Սակայն Stuxnet-ը դրանցով չի բավարարվել եւ տարածվել է ուրիշ երկրներում՝ սարսափ տարածելով ողջ աշխարհի արդյունաբերական օբյեկտներում: Շատերը կասկածում են Իսրայելին, մասնավորապես նրա «Միավորում 8200» հետախուզական խմբին: Անցյալ ամռանը Ռոյթեր գործակալությունը հաղորդել էր Իսրայելում ծնունդ առնող կիբեռպատերազմի նախագծի մասին: Իսրայելի կառավարության նախկին անդամներից մեկը հայտարարել էր, որ Իրանի համակարգչային ցանցերը «անչափ խոցելի» են:**

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Վերեւներից պետք է սկսել

Ասում են՝ Մ. Նահանգներում զորակոչիկներին առաջին 3 ամիսների մարզումների ժամանակ սպաներն առաջին հերթին ներարկում են ագրեսիվություն. սերժանտները հայհոյում են նրանց, հրում, հաճախ անտեղի պատժում, մարզանքի ժամանակ փափուկ ձողերով միմյանց հարվածելու վարժեցնում, գրգռում են նրանց, ընդվզելու մղում: Եվ դա հասկանալի է: Ամերիկյան փափուկ, հանգիստ կյանքից եկած այդ տղաներն այլապես պիտանի չեն բանակային դաժանությանը, պատերազմի փիլիսոփայությանը, որի հիմքը հակառակորդին ոչնչացնելն է, սպանելն է, այլապես...

Իսկ ի՞նչ վիճակ է մեզ մոտ: Չգիտեմ, հոգեբանական ու սոցիալական ուսումնասիրություններ անո՞ւմ են մեր բանակում: Սակայն առանց դրանց էլ ինձ թվում է, որ մեր զորակոչիկներին, ընդհակառակն, ծառայության առաջին 3 ամիսներին պետք է հանգստացնել, ագրեսիվության ավելցուկը պարպել նրանց մեջից եւ հետզհետե վարժեցնել զինվորական կարգապահության:

Եզրակացությունն այս հիմնված է մեր հասարակության մեջ տիրող անհանդուրժողականության, չարացածության, եսակենտրոնության երեւույթների վրա, որոնց առկայությունը հոգեվերլուծական եւ այլ ուսումնասիրություններով ապացուցելու կարիք ամենեւին չկա: Դա կյանքն է թելադրում, կյանքի պայմանները, տարատեսակ անարդարությունները:

Դա երեւում է ամեն քայլափոխի՝ դպրոցում, բուհում, աշխատավայրում, փողոցում, նույնիսկ ընտանիքում, որտեղից գալիս են մեր երիտասարդ զինակոչիկները: Գալիս են մի տեղ, որտեղ զենք կա, կոշտ հարաբերություններ եւ հաշվեհարդարի հնարավորություն:

Նույնը վերաբերում է սպայական կազմին, որ հաճախ անդաստիարակ է եւ անկիրթ: Նա էլ է գալիս այս հասարակությունից, երբեմն ավելի չարացած՝ քան մյուսները, էլ ավելի հաճախ՝ չկայացած մարդու հոգեբանությամբ: (Դրսում իր ծանոթ տղերքը ի՜նչ բիզնեսներ են անում, մինչդեռ ինքը...):

Այո՛, ողջ հասարակության կենսամակարդակը, կրթական մակարդակը փոխելու խնդիրն է դրված մեր առջեւ: Դա համապետական, համաժողովրդային գործ է, որտեղ իշխանությունը եւ հասարակությունը, միմյանց պիտի դաշնակից լինեին, բայց չե՛ն: Եվ այս պայմաններում խիստ դժվար է բանակից ակնկալել իդեալական վիճակ, մի վիճակ՝ առանց խաղաղ պայմաններում սպանվածների, «ինքնասպանների», խոշտանգվածների եւ ստորացվածների:

Բայց դա ամենեւին չի ենթադրում, որ դրությունն անհուսալի է: Թող իդեալիստական չհնչի՝ հասարակության վերադաստիարակության գործը պետք է սկսել հենց բանակից: Ամբողջ երկու տարի, օր ու գիշեր, այդ երիտասարդները պետության հոգատարության ու հսկողության տակ են, ուստի հնարավոր է նրանց վերադաստիարակել ու կրթել: Եթե լինի կամք, եթե տրվեն միջոցներ:

Միայն թե... ինչպես ամեն ինչ բանակում, այդ գործը վերեւներից պետք է սկսել:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

## «Գորշ գայլերի» առաջնորդը պատրաստվում է նամազ անել Անիի մայր տաճարում

### *Նրա այս նախաձեռնությանը հակազդեցությամբ արձագանքում է Թուրքիայի մշակույթի նախարարը*

Նախորդ համարներում գրել էինք, որ թուրքական այսպես կոչված բազմադարյա հանդուրժողականության առանձնահատկությունը անհանդուրժողականությունն է: Դա Թուրքիայում՝ օսմանյան թե հանրապետական, դրսեւորվել է էթնիկ եւ կրոնական խմբերի, ինչպես նաեւ ազգային՝ հույն, հրեա եւ հատկապես հայ փոքրամասնությունների նկատմամբ:

Անհանդուրժողականության օրինակները երկրում բազմազան են: Դա ենթադրում է հակազդեցություն, իսկ հակազդեցությունը տարբեր առիթներով հայերին կամ հայկականը դարձնում է Թուրքիայի քաղաքական շրջանակների թիրախ: Խոսքը տվյալ դեպքում Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում մատուցված պատարագին հակազդելու մասին է:

Այս պատարագը, որը սեպտեմբերի 19-ին մատուցվեց անխաչ Սուրբ Խաչում, հայերին եւ հայկականին հակազդելու հերթական առիթ է հանդիսացել «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության գլխավոր նախագահ Դեւլեթ Բահչելիի համար, որ փոխարենը նամազ անի Անիի մայր տաճարում, այն էլ՝ հենց հոկտեմբերի 1-ին:

Ի՞նչ առնչություն ունի հոկտեմբերի 1-ը Բահչելիի հակազդեցությանը: Այն, որ այդ օրը ամառային արձակուրդներից հետո Թուրքիայի ազգային մեծ ժողովը առաջին նիստն է գումարելու: Այդ մասին դեռեւս սեպտեմբերի 26-ի համարում նշել էր «Սաբահը»՝ գրելով. «Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դեւլեթ Բահչելին պատրաստվում է պատասխանել Վանի Աղթամար կղզու եկեղեցում իրականացված ժամերգությանը: Հոկտեմբերի 1-ին՝ Մեջլիսի նստաշրջանի բացման օրը, նա մասնակցելու է ոչ թե լիագումար նիստի, այլ լինելու է Անիի ավերակներում, որպեսզի ուրբաթօրյա նամազն անի դեռեւս 1064-ին սելջուկյան սուլթան Ալփ Ասլանի մզկիթի վերածած մայր եկեղեցում»:

Ըստ թուրքական թերթի, հոկտեմբերի 1-ին Անիի մայր տաճարում նամազ անելու իր որոշման մասին Բահչելին անձամբ հայտարարել է Ազգայնական շարժում կուսակցության կենտրոնական վարչության դռնփակ նիստում, որի համար նրան հոտնկայս ծափահարել են մասնակիցները: Օգտվելով առիթից նշենք, որ օգոստոսի 15-ին Տրապիզոնի հույն ուղղափառ եկեղեցու Սումելա վանքում մատուցված պատարագից հետո էլ «Մեծ միասնություն» կուսակցության գլխավորությամբ ծայրահեղ ազգայնամոլ շրջանակները հանդես էին եկել Կ. Պոլսո Այա Սոֆիա տաճարում նամազ անելու պատրաստակամությամբ, որը 1453-ի մայիսի 29-ին քաղաքի գրավումով մզկիթի էր վերածել օսմանյան Մեհմեդ 2-րդ սուլթանը: Անիի մայր տաճարում նամազի կանգնելը թերեւս Բահչելիի խնդիրն է: Մեզ չի հետաքրքրում: Սակայն պետք է նախազգուշացնի նրա՝ նամազով միջնորդավորված հայատյացությունը, որովհետեւ նա ոչ թե շարքային թուրք գործիչ է, այլ Թուրքիայի ազգային մեծ ժողովում պատգամավորական 70 տեղեր ունեցող ընդդիմադիր երկրորդ կուսակցության գլխավոր նախագահն է:

Համենայն դեպս Սուրբ Խաչի պատարագը հայկական մեկ այլ տաճարում նամազով հակադարձելու Բահչելիի նախաձեռնությանն էլ սեպտեմբերի 27-ին հակազդել է Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Էրթուղրուլ Գյունայը: Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ՝ նախարարը, ի պատասխան լրագրողների հարցին, ասել է. «Եթե նա որպես անհատ նամազի ցանկություն ունի, ապա կարող է կանգնել այնտեղ, որտեղ նպատակահարմար է գտնում: Սակայն եթե այնտեղ փորձի նամազը ցույցի վերածել, ապա կբախվի սահմանադրությանն ու քաղաքական կուսակցությունների մասին օրենքին, որոնք կարծես կուսակցություններին արգելում են կրոնը շահարկման առարկա դարձնել»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

## Երկրի գլխավոր հիմնախնդիրները գործազրկությունն ու աղքատությունն են

### *Կոռուպցիան այդ շարքում զբաղեցնում է 5-րդ տեղը*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ իրականացրած «Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների եւ ձեռնարկությունների 2009 թ. հետազոտությանը» մեկ անգամ արդեն անդրադարձել ենք («Ամենալուրջ խոչընդոտը Հայաստանի տնտեսության զարգացման համար», «Ազգ», 15 սեպտեմբերի 2010): Այս անգամ կներկայացնենք Հայաստանում տիրող ընդհանուր վիճակի վերաբերյալ մեր հասարակության ընկալման մասին անցկացված հարցումների արդյունքները:**

*Տես էջ 2*




## Ընդդիմությունը միավորվում է Ալիեւի դեմ

**Այդ մասին նախորդ օրը տեղեկացրել է թուրքական «Դունյա բուլտենի» կայքէջը: Ըստ տեղեկության՝ այս նախաձեռնությունը համագումարում հանդես է բերել Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավար Ալի Քերիմլին: Նա, նկատի առնելով «Մուսաֆաթ» կուսակցությանը, ասել է. «Մեր միավորումը, որպես Էմին Ռասուլզադեի եւ Աբուլֆազ Էլչիբեյի հետնորդներ, առաջիկայում ճանապարհ է հարթելու նաեւ մյուս կուսակցությունների միավորման համար: Ժողովուրդը երկար ժամանակ սպասում է, որ տարբեր գաղափարների տեր գործիչներն ու կուսակցությունները միավորվեն: Անհրաժեշտ ենք համարում խորհրդարանական առաջիկա ընտրություններից հետո Ազգային ճակատի եւ «Մուսաֆաթի» առանց նախապայմանի միավորումը: Այդ մասին առաջինը արտահայտվել է «Մուսաֆաթի» նախագահ Իսա Ղամբարը: Համագումարի ընդունած միավորման որոշումը կարծում եմ կպաշտպանի նաեւ «Մուսաֆաթի» ղեկավարությունը»:**

**Քերիմլին միաժամանակ նշել է, որ 2005-ի խորհրդարանական ընտրություններում ընդդիմությունը հաղթել էր, սակայն իշխանությունները կեղծեցին արդյունքները: Նա քննադատել է Ադրբեջանի կառավարությանն ու նախագահին, ընդգծելով, որ Իլհամ Ալիեւի իշխանության օրոք անհնար է դարձել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումը:**

**Նրան է հետեւել համագումարում հյուրի կարգավիճակով հրավիրված «Մուսաֆաթի» նախագահ Իսա Ղամբարի համանման քննադատությունը, իսկ Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության առաջնորդ Սերդար Ջելալօղլին հայտարարել է, որ պետք է միավորվեն բոլոր կուսակցությունները: Այդ ընթացքում Ադրբեջանի ազգային ճակատի համագումարը ընդունել է նախքան «Մուսաֆաթի» հետ միավորվելը առաջիկա խորհրդարանական ընտրություններին, որոնք նախատեսված են նոյեմբերի 7-ին, համատեղ ցուցակով մասնակցելու որոշում:**

Հ. Չ.

## Ի՞նչ է առաջարկել ԼՂՀ նախագահը Մինսկի խմբի համանախագահներին

«Հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ չէ», նկատել է ԼՂՀ նախագահ **Բակո Սահակյանը**՝ ուկրաինական «Սեգոդնյա» պարբերականին տված հարցազրույցում: Ի դեպ հարցազրույցը կայացել է Ստեփանակերտում, ինչը նշանակում է, որ ուկրաինացի լրագրողը, հակառակ Բաքվի կամքի, այցելել է ԼՂՀ: «Օրակարգում Լեռնային Ղարաբաղի անկախության վերջնական ճանաչումն է, իսկ Հայաստանի հետ միանալու հարց չկա: Հակամարտությունն սկսվել է Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ, իսկ Բաքուն կարողացավ դրա մեջ ներգրավել Հայաստանին: Հայաստանը դեռ չի ճանաչում Ղարաբաղը, դրանով ցույց տալով իր պատասխանատվության աստիճանը: Նրանք չեն ցանկանում խանգարել բանակցային գործընթացին: Ես առաջարկել եմ ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ կազմակերպել իմ հանդիպումը Ադրբեջանի նախագահի հետ: Բայց նրանք առայժմ ի վիճակի չեն ապահովելու նման ձեւաչափ՝ Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով: Այնտեղ ասում են. «Չկա նման պետություն: Դա Ադրբեջանի մի մասն է, եւ մենք կարող ենք բանակցություններ վարել ԼՂ-ի հայկական համայնքի հետ»: Մենք տասնյակ անգամներ տարբեր առաջարկություններ ենք արել, մասնավորապես դիպուկահարներին հետ քաշելու կապակցությամբ: Բայց մեր բոլոր նախաձեռնությունները ընդունվում են հիստերիայով: Ընդհանուր առմամբ, պահպանվում է լարվածության միջին մակարդակը՝ ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն: Մենք պետք է այդ փոխզիջումների մասին խոսելու հնարավորություն ունենանք, իսկ բանակցային գործընթացն ընթանում է առանց Ղարաբաղի մասնակցության: ԼՂ-ի անկախությունն ու անվտանգությունը չեն կարող փոխզիջման առարկա լինել», հայտարարել է Սահակյանը:

ԼՂՀ նախագահը նաեւ մեկնաբանել է այն տեղեկությունը, թե Մոսկվան պատրաստվում է զենք վաճառել Ադրբեջանին. «Մենք հավաստի տվյալներ չունենք, որ Ռուսաստանը պատրաստվում է զենք վաճառել Բաքվին: Ռուսաստանի շնորհիվ ձեռք է բերվել այս խաղաղությունը, թեկուզ հարաբերական»:

Վերջում Բակո Սահակյանը անդրադարձել է նաեւ Ղարաբաղի եւ այլ պետությունների միջեւ հարաբերություններ հաստատելու կարեւորությանը. «Ցավոք, կոնկրետ Ուկրաինայի հետ կապեր չունենք: Մենք կուզենայինք ապահովել տնտեսական, մշակութային, կրթական համագործակցություն: Մենք պաշտոնական հարաբերություններ չունենք ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ ՌԴ-ի, ո՛չ էլ ԵՄ-ի հետ: Ես անձամբ ծանոթ չեմ ոչ Մեդվեդեւի, ոչ Յանուկովիչի հետ», ասել է Սահակյանը:

Հ. Ա.

# «Ոսկե բանալիներն» ու «Ժանգոտ կողպեքը» գտան իրենց տերերին

## Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխությունը

Սեպտեմբերի 28-ը տեղեկատվության ազատության միջազգային օրն է: Երեկ «Ռեժինե» հյուրանոցում տեղի ունեցավ տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխությունը: Արդեն 8-րդ տարին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) անցկացնում է տեղեկատվության ազատության մրցանակաբաշխությունը՝ սկսած 2003 թվականից: Միջոցառմանը ներկա էր ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: «Առաջին հերթին կարեւորում եմ, որ պետական կառավարման մարմինները լինեն բաց եւ թափանցիկ իրենց գործունեության ընթացքում: Մենք բավականին լուրջ ջանքեր ենք գործադրում, որպեսզի պետական մարմինների ընդունած բոլոր որոշումները հասանելի լինեն հասարակության համար, ինչպես նաեւ որոշումների նախագծերը հասարակության հետ նախապես քննարկման առարկա դառնան», ասաց վարչապետը: Մրցանակաբաշխության դրական մրցանակը «Ոսկե բանալին է», որը տրվում է բաց եւ լավ աշխատանքի համար, իսկ բացասական մրցանակը «Ժանգոտ կողպեքն» է, որը տրվում է որպես գաղտնի ու վատ աշխատանքի խորհրդանիշ:

«Միջոցառման հիմնական նպատակն է խրախուսել բաց կառավարման ավանդույթները եւ խստորեն քննադատել այն մարմիններին, որոնք հանրության աչքից դեռեւս փակ ու գաղտնի են աշխատում», ասաց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ղեկավար **Շուշան Դոյդոյանը**:

Այս տարի «Ոսկե բանալի» մրցանակ ստացավ Գորիսի համայնքապետարանը որպես 2010-ի ամենահրապարակային գործող մարմին: Քաղաքապետ **Նելսոն Ոսկանյանն** անձամբ վերցրեց մրցանակն ու հանդես եկավ շնորհակալական խոսքով: ՀՀ կառավարության էլեկտրոնային կառավարման www.egov.am կայքին շնորհվեց մրցանակ որպես 2010 թվականի տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք:



Շուշան Դոյդոյանն առաջընթաց համարեց այն երեւույթը, որ ավելի շատ քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ եւ լրագրողներ են սկսել օգտվել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի ընձեռած հնարավորություններից: «Պաշտոնյաներին ուղղված քաղաքացիների նամակները օրենքի տեսանկյունից ավելի պատշաճված ու գրագետ են դարձել, ուստի դրանք ավելի մեծ պատասխանատվություն են դնում պաշտոնյաների առջեւ», հավելեց Շուշան Դոյդոյանը:

«Մե՛նք ենք այս քաղաքի տերը» քաղաքացիական նախաձեռնությանը եւս շնորհվեց «Ոսկե բանալի»՝ որպես 2010-ի ընթացքում տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած հասարակական կազմակերպության: «Մե՛նք ենք այս քաղաքի տերը» նախաձեռնության անդամներից **Լուսինե Բեքարյանը** տեղեկացրեց, որ իրենց նախաձեռնությունը պայքարում է կանաչ տարածքների պահպանման համար: «Ամեն ինչ սկսվեց Ազգային գրադարանի հարեւանությամբ գտնվող ուսանողական այգուց: Հենց այդ ժամանակ էլ ստեղծվեց մեր նախաձեռնությունը, եւ արդեն կես տարի գոյություն ունի», ասաց Լուսինե Բեքարյանը:

Որպես 2010 թվականի տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաապակտիվ լուսաբանած լրագրող մրցանակ ստացավ «Առավոտ» օրաթերթի լրագրող **Արամ Զաքարյանը**: «Խոսքի իրավունք» հաղորդաշարին (Հ 2 հեռուստաընկերություն) շնորհվեց մրցանակ՝ որպես 2010-ի տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենաակտիվ լուսաբանած հեռուստահաղորդման: «Ոսկե բանալի» շնորհվեց նաեւ տեղեկություն ստանալու իր իրավունքը լավագույնս օգտագործած քաղաքացուն՝ **Հակոբ Թովմասյանին**: «Բոլոր քաղաքացիներին խորհուրդ կտայի օրենքով սահմանված կարգով դիմել համապատասխան կառույցներին եւ ստանալ իրենց հարկավոր տեղեկությունը», ասաց Հակոբ Թովմասյանը:

Բացասական մրցանակը՝ «Ժանգոտ կողպեքը», ստացավ Ստեփանավանի համայնքապետարանը որպես 2010-ի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտականություններն ամենավատ կատարող մարմին:

Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանի խոսքով՝ տեղեկատվության ազատության առումով դրական միտումներ արդեն կան: «Մենք ավելի շատ առաջ ենք գնում, մեր միտումն ավելի շատ ազատության կայացումն է, քան դրա հակառակը», հավելեց Աստղիկ Գեւորգյանը:

Մրցանակաբաշխության արդյունքները որոշել էր ոլորտում գործող 9 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված անկախ ժյուրին: Մրցանակաբաշխությունը կազմակերպել էր ԻԱԿ-ն՝ աջակցությամբ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության եւ Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**



# ԹՄՄ «Ադամանդակուռ Արարատ»՝ Հրավարդ Հակոբյանին

**Հայ իրականության մեջ հաճախ չի կարելի հանդիպել մարդկանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերում են արվեստին եւ գիտությանը՝ սերունդներին թողնելով նշանակալի ժառանգություն: Հրավարդ Հակոբյանի երկարամյա գործունեությունը գնահատելը դժվար գործ է: Նրա հեղինակությամբ հրատարակվել են Վասպուրականին, Արցախի ձեռագիր մատյաններին, պատմական հուշարձաններին եւ մշակույթին նվիրված աշխատություններ, որտեղ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել հազվագյուտ մատյաններ, նկարներ ու փաստեր:**

**Հակոբյանը «Հայ արվեստի աշխարհում», «Համաշխարհային եւ հայ արվեստի պատմության ուղեցույց» եւ «Կերպարվեստը հայոց կրթարաններում» գրքերի հեղինակն է: Մեծ է նրա գործունեությունը հայկական սրբապատկերների առանձնահատկություններն ուսումնասիրելու եւ ներկայացնելու գործում: 2003-ին հրատարակվեց «Հայոց տերունական սրբապատկերները» աշխատությունը, իսկ 2007-ին «Հայ արվեստի պատմություն» աշխատությունն արժանացավ պետական մրցանակի: Հակոբյանն առաջինն էր, որ կարողացավ Արցախի պատմությունը, մշակույթն ու արվեստը ներկայացնել նաեւ օտարազգի ներկայացուցիչներին:**

**1993-ին Բեռլինում հրատարակված Արցախի մասին հսկայածավալ աշխատությունը այս խոսքերի ապացույցն է:**

**Արվեստի եւ գիտության բնագավառում շուրջ կեսդարյա գործունեության համար Հրավարդ Հակոբյանն արժանացել է բազմաթիվ պարգեւների:**

**Երեկ Թեքեյան մշակութային միությունում ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Հրավարդ Հակոբյանն արժանացավ ԹՄՄ «Ադամանդակուռ Արարատ» շքանշանին:**

**«Հրավարդ Հակոբյանի տարիքը չի երեւում ոչ իր արտաքինից, ոչ էլ գործունեությունից: Շնորհակալություն այն խանդավառության համար, որ մենք ապրում ենք Ձեր պարգեւած բազմաթիվ գրքերի շնորհիվ: Դրանք գեղեցիկ են իրենց բացառիկությամբ: Ձեր ստեղծագործություններով տոն եք պարգեւում՝ մեզ հանձնելով արվեստի պատմության հսկայական ժառանգություն: Ձեր ստեղծագործություններով հերթական անգամ հպարտության զգացումով ենք լցվում, որ հայ ենք», ասաց Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը:**

**Գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանի մեկնաբանությամբ՝ Հակոբյանն այն եզակի մտավորականներից է, որ պայքարում է ազնվության եւ ճշմարտության համար:**

**«Չի ստում, իր կարիերան չի հարթում ուրիշներին վնաս պատճառելու եւ ստորացնելու հաշվին, հաճախ իր անձականը զոհում է ուրիշների համար եւ հավատում մարդկային հոգու մաքրությանը»:**



**«80-ամյակը թող նոր լիցքեր հաղորդի առավել եռանդով աշխատելու համար: Գիրք հրատարակելու, նոր բաներ գտնելու, ուսումնասիրելու նրա ցանկությունն ու եռանդը միայն ոգեւորություն եւ հիացմունք են պատճառում: Շնորհավորում եմ շքանշանը: Այն հավասարազոր է կառավարական պարգեւին եւ խորհրդանշում է գնահատանք եւ պատկառանք»: Սա էլ ակադեմիկոս Սեն Արեւշատյանի բարեմաղթանքն էր:**

**Գեղարվեստի ակադեմիայի տնօրեն Արամ Իսաբեկյանի հավաստմամբ՝ Հակոբյանին ուսանողները շատ են սիրում: «Պատահում է, որ միմյանց չենք հասկանում, վիճում ենք, սակայն հետո պարզվում է, որ Հրավարդ Հակոբյանը ճիշտ է, եւ այդ ճշտի արդյունքում գեղարվեստի ակադեմիան հրաշալի շրջանավարտներ է ունեցել»:**

**«Շնորհակալ եմ, ոգեւորված եւ պարտավորված», եզրափակեց օրվա հերոսը:**

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Երկրի գլխավոր հիմնախնդիրները գործազրկությունն ու աղքատությունն են

*1-ին էջից*

Ըստ հետազոտության, տնային տնտեսություններում (բնակչության) հարցվածների մեծամասնությունը բացասական կարծիքի է Հայաստանի ընդհանուր եւ տնտեսական իրավիճակի մասին: Ընդ որում, 2009-ին այդ իրավիճակը դրական համարողների թիվը 2008-ի համեմատ նվազել է, ինչը թերեւս տրամաբանական պետք է համարել, նկատի ունենալով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը եւ դրա բացասական ազդեցությունը մեր երկրի վրա: Մասնավորապես, 2009-ին երկրի ընդհանուր իրավիճակից բավարարված չէ հարցվածների 73 տոկոսը, 2008-ի 61 տոկոսի փոխարեն: Երկրի իրավիճակով 2009-ին բավարարված է եղել հարցվածների 27 տոկոսը՝ 2008-ի՝ 38 տոկոսի փոխարեն: Հետազոտության տվյալներով, որոշակի կապ գոյություն ունի երկրի իրավիճակով բավարարված լինելու ցուցանիշի եւ կրթամակարդակի միջեւ: Կրթամակարդակի նվազման հետ նվազում է նաեւ իրավիճակով բավարարվածության զգացումը: Այսպես, երկրի իրավիճակով բավարարված չեն թերի բարձրագույն եւ ավելի ցածր կրթամակարդակ ունեցողների 47 տոկոսը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների ընդամենը 26 տոկոսը:

Հարցվածների կեսից ավելին հետաքրքրված չէ քաղաքականությամբ եւ կառավարման համակարգի խնդիրներով: Այս ոլորտի նկատմամբ շատ կամ մասամբ հետաքրքրվածների ցուցանիշը 2008-ին եւ 2009-ին մնացել է անփոփոխ՝ 42 տոկոս: Այստեղ նույնպես որոշակի կապ գոյություն ունի կրթամակարդակի եւ այս ոլորտով հետաքրքրության միջեւ: Եթե միջնակարգ կրթություն ունեցողների 44 տոկոսին քաղաքականությունն ու պետական կառավարման համակարգի խնդիրները չեն հետաքրքրում, ապա բարձրագույն կրթություն ունեցողների միայն 17 տոկոսին չեն հետաքրքրում:

Կոնկրետ երկրի տնտեսական իրավիճակի մասին գնահատականներից գերակշռում է «միջին» գնահատականը: Հայաստանի տնտեսության իրավիճակն այդպես են գնահատել հարցվածների 45 տոկոսը 2009-ին եւ 50 տոկոսը՝ 2008-ին: «Վատ» գնահատականը 26 տոկոս է ու անփոփոխ է մնացել 2008-ին ու 2009-ին, «շատ վատ» գնահատականը 2009-ին եղել է 23 տոկոս, 2008-ին՝ 17 տոկոս: «Լավ» եւ «շատ լավ» են գնահատել հարցվողները տնտեսական իրավիճակը 2009-ին՝ 6 տոկոսը, 2008-ին՝ 7 տոկոսը:

Հայաստանի գլխավոր հիմնախնդիրները, հետազոտության արդյունքների համաձայն, նույնպես տնտեսական բնույթի են: Մասնավորապես, Հայաստանի գլխավոր հիմնախնդիր 2009-ին հարցվածների 65 տոկոսը մատնանշել է գործազրկությունը: Նրանց 30 տոկոսը մատնանշել է աղքատությունը, 23 տոկոսը՝ ընդհանուր բնույթի տնտեսական խնդիրները եւ 20 տոկոսը՝ գնաճն ու բարձր գները: Այս պատասխանների կազմն ու կառուցվածքը չնչին փոփոխություններով 2008-ի համեմատ մնացել են նույնը: Նշենք, որ այս հարցին պատասխանողներին տրվել էր մինչեւ 3 պատասխան տալու հնարավորություն: Գործազրկությունն ու աղքատությունը որպես գլխավոր հիմնախնդիր ավելի շատ նշել են Երեւանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում եւ գյուղերում բնակվողները:

Հայաստանի առջեւ ծառացած հիմնախնդիրներից կոռուպցիան զբաղեցրել է 5-րդ տեղը՝ հարցվածների 15 տոկոս անփոփոխ ցուցանիշով՝ 2009-ին եւ 2008-ին: Կոռուպցիայի ընկալման, այդ խնդրի լրջության եւ այլ հարցերի վերաբերյալ հետազոտության արդյունքների մասին կանդրադառնանք մեր հաջորդ հրապարակմամբ:


«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի


Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:


"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Իշխանության եւ ՀԱԿ-ի միջեւ գաղափարական տարբերություն չկա՞

Մեր հասարակության մեջ մի փակ շղթա է ստեղծվել. մի կողմից ասվում է, թե քանի ժողովուրդն այսպիսի անտարբերությամբ, անհավատությամբ, մերկանտիլ մոտեցումներով է մասնակցում քաղաքական կարեւորագույն պրոցեսին՝ ընտրություններին, քանի դեռ փող է վերցնում, փողի դիմաց է քվեարկում, ճնշվում է վարչական ռեսուրսից՝ երկրում նորմալ ընտրություններ չեն լինի: Մյուս տեսակետով՝ քանի իշխանություններն իրականացնում են այդ վարչական ճնշումները, կաշառում եւ դրանով այլասերում են ժողովրդին եւ քանի որ նրանք են փչացրել ընտրական համակարգը՝ էլի ոչ մի բան չի ստացվի: Երկու հաստատումների մեջ էլ ճիշտ բան կա, բայց որտե՞ղ պետք է կտրել արատավոր օղակը: Այս հարցերը երեկ բարձրացրեց ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը**՝ Մամուլի ազգային ակումբում հանդիպելով լրագրողների հետ եւ իր այս բարձրացրած հարցերին եւս պատասխան հնչեցնելով. այն մարդիկ, ովքեր ժողովրդի կամ իշխանության կամքի դրսեւորման վրա են հույս դնում՝ նորմալ քաղաքական համակարգ ձեւավորելու համար, երկուսն էլ սխալ են, քանի որ հենց սկզբից՝ 90-ականներից սխալ ուղղություն է վերցվել, հետո շարունակվել է նույն կերպ, եւ հիմա այդ վիճակից պետք է դուրս գալ շատ զգուշորեն, երկու կողմի կամքերը հավասարաչափ զարգացնելով: Ըստ նրա՝ հիմա բոլորն են դժգոհ վիճակից, բոլորը սկսել են հասկանալ, որ աղքատ երկիրը օլիգարխի բեռ չի կարող կրել, նույնիսկ օլիգարխն է հասկացել ու փորձում է ձեւանալ, որ ինքը բոլորովին ուրիշ կերպար է՝ Քեմբրիջն է ավարտել, պատահմամբ փող ունի, բայց շուտով «կկիսվի» ժողովրդի հետ. «Այ երբ այդ շուտովը տեղի կունենա, երբ կսկսվի վերջապես խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց կամքի դրսեւորումը, որովհետեւ այլ բան պետությունը դեռ չի կարողանում դրսեւորել, հարկերը կսկսեն համալրել մեր բյուջեն, ինչպես պահանջում է օրենքը, այդ ժամանակ մյուս երկու կողմերը՝ ժողովուրդն ու իշխանությունը կկարողանան դրսեւորել այդ կամքը»: Վ. Հովհաննիսյանն ասում էր, թե երկրում տնտեսական մեթոդներով ոչ միայն ընդերքը, հողերը, գործարաններն են մասնավորեցված, այլեւ քաղաքական իշխանությունը. «Քաղաքական մեթոդներով ստացված իշխանությունը քաղաքական մեթոդներով էլ կտաս: Տնտեսական



մեթոդներով ստացած իշխանությունը դառնում է շարժիկից մոտիկ բան, մարդիկ կարող են ինսուլտ ստանալ, բայց շարժիկ չլինել», հեգնեց նա: Ըստ նրա՝ ընդդիմություն-իշխանություն բաժանումները շատ պայմանական են. Կոնգրեսը սկզբում պահանջում էր Սերժ Սարգսյանի հրաժարականն ու վերջ, հիմա, ըստ Հովհաննիսյանի, ՀԱԿ-ում ՀՅԴ տերմինաբանությամբ են խոսում՝ պահանջում են ամբողջական իշխանափոխություն, հասկացել են, որ եթե մենակ Սերժ Սարգսյան ես փոխում, հարց է առաջանում՝ ում՞վ, իրենց ձեռք չի տալիս. «Երբ փորձում ես հասկանալ՝ իշխանության եւ Կոնգրեսի մեջ գաղափարական տարբերությունը ո՞րն է, տեսնում ես, որ առանձնապես չկա. ուղղակի՝ «դուք գնացեք, մենք գանք նույնն անենք», էդ տեսակի պայքարի մեջ պետք է բացել ժողովրդի աչքերը, որ նա հասկանա՝ ո՞վ է ընդդիմություն եւ ով՝ ինչի համար է պայքարում»: Իսկ թե Կոնգրեսը կանցնի՞ խորհրդարան, Վ. Հովհաննիսյանը չգիտի. «Եթե հույսն իմ ձայնն է, ապա՝ ոչ»:

ՀՀԿ-ական այն հայտարարություններին, որ 100 տոկոսով վստահ են հաղթանակին առաջիկա խորհրդարանական ընտրություններում՝ Վ. Հովհաննիսյանն այսպիսի բնորոշում տվեց. «Քաղաքական ուժը, որ 100 տոկոսով վստահ է, վտանգավոր է: Նա պիտի վստահ լինի, որ այնքան լավ է աշխատել, «հաց ու կարագ» հասցրել ժողովրդին, այնպիսի երջանիկ մանկություն է տվել, որ համոզված է իր ընտրվելու մեջ: Երկրորդ, վստահ է, որ կընտրվի կեղծիքների միջոցով: Ես կարծում եմ, որ կոալիցիայից եւ ոչ ոք չի կարող ասել, թե լավ է աշխատել»:

Բանակում մահացու ելքով դեպքերի մասին արտահայտվելիս նկատեց, որ եթե զորամասեր կան, ուր կարգուկանոն չկա, նրանցից մարտունակություն սպասել պետք չէ, նման զորամասերը լուրջ բուժման կարիք ունեն, նույնիսկ՝ վիրահատման միջոցով: Սակայն նա անթույլատրելի համարեց բանակը քաղաքական հարձակումների թիրախ դարձնել՝ այնքան անթույլատրելի, որքան եւ քաղաքական գործընթացների մասնակից դարձնելը:

Արտահերթ ընտրությունների ուրվականը դեռ լրագրողները փնտրում էին. «Ամեն ինչ հնարավոր է՝ ֆորսմաժոր իրավիճակ ամեն երկրում, ամեն պահի կարող է առաջանալ, բայց Հայաստանում ընտրությունները եթե արտահերթ լինեն՝ ի՞նչ կփոխեն, դրա համար արտահերթ ընտրությունները որպես մեզ համար նպատակ մենք չենք էլ դիտում, եթե լինեն՝ կլինեն»:

Ծառուկյան-Սարգսյան հակասությունների մասին որ այդքան խոսում են՝ Վ. Հովհաննիսյանը չի հավատում դրանց, թերահավատ մարդ է:

Ղարաբաղում փաստահավաք խումբ գալու վերաբերյալ հայկական դիրքորոշումը պետք է լինի ցույց տալ, որ այստեղ ապրում են այն մարդիկ, որոնց արտաքսել են Ադրբեջանից, նրանք փրկելով իրենց կյանքը վերադարձել են իրենց հայրենիք՝ Քարվաճառ, Բերձոր եւ մնացած տարածքները: Նա անթույլատրելի համարեց, որ Մինսկի խմբի անդամները վերջին անգամ Ադրբեջանի կողմից մուտք գործեցին Ղարաբաղ. փոքր-փոքր զիջումները հետագայում բավականին ծանր հետեւանքների կարող են բերել, Ադրբեջանը հետագայում էլ կարող է պահանջել, որ նույն ճանապարհով գնան, նա դա քաղաքական բավականին լուրջ սխալ համարեց: Երբ Ջուղայի հուշարձանները տեսնել էր պահանջում հայկական կողմը, այն ժամանակ նազուտուզ արեց փաստահավաք խումբը, իսկ մեր պարագայում չգիտես ինչու մերոնք տրտաբաց են ընդունում այդ փաստահավաք խմբերին: Օրինակ, նրա կարծիքով, կարելի էր պատասխանել, թե հարցում կանցկացվի տարածքի բնակիչներից, ուզո՞ւմ են փաստահավաք խումբ տեսնել, թե՞ ոչ: Փաստահավաք խմբի առջեւ էլ պետք է այլ խնդիր դրվեր՝ եկեք տեսնելու, թե ո՞նց ենք ապրում, ի՞նչ պայմաններում, եւ ինչո՞ւ դուք չեք ճանաչում մեր ընտրությունները, երբ մենք փորձում ենք ժողովրդավար պետություն կառուցել:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



# Իրական «բանակ»

**Երբ անապատի հենց մեջտեղում, որտեղ ջրի կաթիլ անգամ չկա, չորանում է այնտեղ ստեղծված օազիսը, ո՞վ է մեղավորը, մի՞թե օազիսի տերը, ավելի ճիշտ՝ մի՞թե միայն օազիսի տերը: Իսկ «անապատի բնակիչնե՞րը», նրանք մեղավոր չե՞ն, որ չեն չարչարվում միակ հարստություն, միակ ձեռքբերում օազիսը պահելու համար: Օրինակ, ինչո՞ւ են նրանք «հոգնում» դույլերով ջուր բերելուց, եւ ի՞նչ, որ աղբյուրը կիլոմետրերով հեռու է. օազիսը արժանի չէ՞ դրան, նույն «անապատի բնակիչը» արժանի չէ՞ արդյոք դրան:**

**Բանակը, ցավոք տրտի, հայ հասարակության միակ հպարտության հիմքն է եղել դարեր շարունակ: Նույնիսկ երրորդ հանրապետությունն ու իր քաղաքացին ընդամենը վերջերս, եթե խոսում էր բանակից, ապա միայն լավը, միայն ձեռքբերումների մասին, որոնք նաեւ օտարերկրացի մանագետների խոսքերով, ակնհայտ են անգամ տարածաշրջանային համայնապատկերում: Ուրեմն ինչո՞ւ հանկարծ որոշեցինք դժգոհել, ավելին՝ պախարակել բանակը, որովհետեւ մարդասպաննե՞ր կան, որովհետեւ ծաղրուծանակի՞ են ենթարկվում զինվորներ, որովհետեւ շահագործում են խեղճերի՞ն, որովհետեւ չեն պատժվում մեղավոր սպանե՞րը, եթե այո, ապա տարօրինակ է, քանի որ այս ամենը կար եւ սովետական բանակում եւ կա նախկին սովետական որեւէ երկրի բանակում: Անշուշտ, երբ հարեւանի տանը հրդեհ է, ապա դա չի կարող արդարացնել քո տան հրդեհը, սակայն հաստատապես նշանակում է, որ քո տանը օդն էլ աղտոտված կլինի:**

**Հայկական բանակի վերջին օրերի դեպքերն ադեսալի են, դրանք պետք է դատապարտել, դրանք պետք է արմատախիլ անել, բոլորս ենք հասկանում: Բայց չարիքն արմատախիլ անելու համար անհրաժեշտ է արմատներից սկսել, իսկ ավելի շուտ՝ գտնել այդ արմատները: Ինչո՞ւ, օրինակ, զարմանում ենք, զզվում ենք, հիասթափվում ենք, որ հայ զինվորը սպանում է հայ զինվորին, բայց «նորմալ» եւ հերթական ենք համարում, երբ երեւանյան փողոցներում ջիպը վրաերթ է կատարում մեկի վրա, երբ բակում՝ մի մութ տեղ, հանկարծ գտնում են երիտասարդ հայի դիակ՝ դանակով խոցված, երբ որդին սպանում է ծնողին, երբ ծնողն աղբարկղն է նետում նորածին որդուն կամ վաճառում է նրան:**

**Ահա մեր հասարակությունը, կարծում եք այն ամբողջական պատկերը չէ՞, վստահ եք, որ լավ մարդիկ ու լավ բաներ նո՞ւյնպես կան, իհարկե իրավացի եք, բայց, հետեւաբար, իրավացի են նաեւ նրանք, ովքեր բանակում նույնպես լավ մարդկանց՝ լավ սպաների ու լավ բաներ տեսել են ու տեսնում են, հետեւաբար վերջին օրերի բանակում տեղի ունեցած մահվան դեպքով ադեսալի դեպքերը ամբողջական հայկական բանակը չեն:**

**Այո, կան սպաներ, որոնք ծեծում են, կան սպաներ, որոնք հեգնում են, որոնք ծաղրուծանակի են ենթարկում, իսկ դուք մեկ անգամ գոնե եղե՞ք երեւանյան բակում, որտեղ «տղերքն են հավաքված», ու մեկ-երկու րոպե լսեք նրանց... եթե կդիմանաք իհարկե: Ուրեմն, ինչո՞ւ երիտասարդը, որը սեփական տան պատուհանի առջեւ կարող է հայհոյել, կարող է դանակահարել, նույնը չի կարող անել կամ չպետք է անի բանակում, որովհետեւ այնտեղ պարտավոր է իրավիճակը վերահսկելի լինել, իսկ ո՞ւմ կողմից՝ թույլ տվեք հարցնել, արդյոք ո՞չ նույն հասարակության մասնիկ սպայի, որը, օրինակ, նոր է ավարտել ռազմական ուսումնարանը եւ 21 տարեկանում արդեն սպա է՝ հրամանատար: Ուրեմն բանակը մեղավոր չէ, ավելի ճիշտ՝ միայն բանակը մեղավոր չէ. բանակը զզվելի է այնքան, որքան զզվելի ենք մենք, որքան զզվելի են մեր եղբայրներն ու որդիները: Կհայտնվի՞ մեկը, ով կասի՝ իմ եղբայրը զզվելի է, իսկ որքա՞ն մարդիկ կհայտնվեն, որոնք զզվանք կարտահայտեն բանակից... տարօրինակ է, նույնիսկ անհասկանալիորեն տարօրինակ:**

**Մյուս կողմից, եթե ընդունենք, որ բանակն առանձնահատուկ ոլորտ է մեզ համար՝ մանավանդ հաշվի առնելով արտաքին հանգամանքները, հետեւաբար այն պետք է լինի՝ «արեւի նման ջինջ», եւ ամեն ինչ կախված է վերադասից. նա պետք է իր խիստ միջոցներով վերահսկի «բոլորին եւ ամեն ինչ», ապա անմիջապես նշենք, որ դա ուղղակի անհնար է: Անգամ «փառապանծ» Ստալինը ոչ միշտ գիտեր, թե ի՞նչ է կատարվում, ասենք, Յակուտսկում կամ ղրղզական Օշում:**

**Ուրեմն ինչպե՞ս պետք է պաշտպանության նախարարն անձամբ վերահսկի «բոլորին եւ ամեն ինչ»: Անշուշտ, նա պարտավոր է, բայց արդյո՞ք դա հնարավոր է, արդյո՞ք որեւէ «հնարամիտ հայի» համար հնարավոր չէ որեւէ բան թաքուն պահել վերադասից: Եկեք «մտնենք» հանրակրթական դպրոց: Ուսուցիչը չի՞ կարող տնօրենից թաքուն աշակերտի հետ մասնավոր պարապել՝ անշուշտ կարող է, ցավոք՝ կարող է:**

**Ամենացավալին այն է, որ այսօր բանակին քննադատում են նաեւ նրանք, ում որդիները «Մոսկվա-Լոս Անջելոս-Փարիզ»-ներում սպասում են, թե երբ պետք է դառնան 27 տարեկան կամ ունենան երկրորդ զավակը, քննադատում են նրանք, ովքեր «չգիտես ինչու» պայքարում են, որ ասպիրանտուրայում տեղերը շատ լինեն: Այո, քննադատում են եւ արդարացիորեն են քննադատում նաեւ այն սեւազգեստ մայրերը, որոնք որդի են կորցրել, պարզապես նրանք իրենց որդիներին ու մենք՝ մեր եղբայրներին ամենեւին էլ չենք կորցրել հայոց բանակում, մենք նրանց կորցրել ենք հայ հասարակությունում, որտեղ ցավոտ խնդիրներն այնքան են, որքան բանակում:**

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

# «Վիվասել-ՄՏՍ»-ն եւ Samsung-ը՝ Հայաստանում Samsung Galaxy S սմարթֆոնների վաճառքի մեկնարկի մասին

«Վիվասել-ՄՏՍ»-ն, Samsung ընկերության հետ բացառիկ եւ պաշտոնական համագործակցության շրջանակներում, Հայաստանում առաջին անգամ սկսում է Samsung Galaxy S սմարթֆոնի վաճառքը:

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ» ընկերության մեզ տրամադրած հաղորդագրությունից, Samsung Galaxy S (Model: GT-I9000) սմարթֆոնն օգտագործողի առօրյան դարձնում է առավել հարմարավետ, հետաքրքրական եւ լիարժեք: Android համակարգով գործող Galaxy S-ը՝ 4 դյույմ չափի Super AMOLED էկրանի եւ 1 ԳՀց հաճախականությամբ պրոցեսորի համադրությամբ, թույլ է տալիս տեսնել HD ֆորմատի տեսանյութեր, Layar Reality Browser-ի շնորհիվ՝ հեշտությամբ տեղեկանալ շրջակայքում առկա արճարանների, խանութների, պատկերասրահների եւ հետաքրքրություն ներկայացնող այլ վայրերի մասին, Social Hub-ի շնորհիվ օգտագործողը հնարավորություն ունի մշտապես կապի մեջ լինելու ընկերների, գործընկերների եւ ընտանիքի անդամների հետ՝ անկախ գտնվելու վայրից:

«Վիվասել-ՄՏՍ»-ն նպատակ ունի հայաստանյան շուկայում ներկայացնել օգտագործողի կարիքներին համապատասխան, հարմարավետ սարք, որը թույլ կտա վայելել ձայնային եւ բարձր արագության տվյալների փոխանակման ծառայությունները՝ անկախ գտնվելու վայրից: Samsung ընկերության հետ համագործակցության արդյունքում կոմպակտ տեսքով նորարարական Samsung Galaxy S սմարթֆոնի ներմուծումը հայաստանյան շուկա հերթական քայլն է, որով մենք հնարավորություն ենք ընձեռում մեր բաժանորդներին զգալու տարբերույթ կոնտենտի եւ ինտերնետի արագ հասանելիությունը՝ օգտվելով «ՎիվաՍել»-ՄՏՍ-ի 3.5G ցանցի առավելություններից», սմարթֆոնների վաճառքի մեկնարկը մեկնաբանելով՝ ասել է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Վիվասել-ՄՏՍ»-ի հաղորդագրությունից տեղեկանում ենք նաեւ, որ Samsung Galaxy S սմարթֆոնը ներկայացված է երկու տարբերակով՝ 16 ԳԲ եւ 8 ԳԲ ներքին հիշողությամբ՝ համապատասխանաբար 315000 դրամ եւ 295000 դրամ արժողությամբ: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում ձեռք բերված Samsung Galaxy S սմարթֆոնների համար տրամադրվում է արտադրողի 12-ամսյա պաշտոնական երաշխիք: Ցանկության դեպքում հեռախոսը կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ:

**Ա. Մ.**

# Իսպանիայում բացվել է ՀՀ դեսպանատուն

**Հայաստանի արտգործնախարարության մամուլի եւ տեղեկատվության վարչության փոխանցմամբ՝ տեղի հայ համայնքի ուժերով վերանորոգված դեսպանատան սրահում կազմակերպվել է Հայաստանի անկախության 19-րդ տարեդարձին եւ Իսպանիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության բացմանը նվիրված ընդունելություն: Ընդունելությանը ներկա են եղել մի քանի տասնյակ մադրիդահայեր, երկրի տարբեր շրջաններից ժամանած հյուրեր, այդ թվում՝ հայ կրթամշակութային կառույցների ներկայացուցիչներ Բարսելոնից, Վալենսիայից, Մալագայից, Ալիկանտեից: Իսպանիայում Հայաստանի գործերի հավատարմատար Խորեն Տերտերյանի հրավերով Մադրիդ են ժամանել նաեւ Հայկական բարեգործական ընդհանուր միության եվրոպական մասնաճյուղի փոխտնօրեն Սոնա Ադամյանը, անդամներ Միշել Սաբահը եւ Ֆրանսուազ Գովչյանը: Մադրիդի կենտրոնում գտնվող դեսպանատան օծման արարողությունը կատարել է Իսպանիայում եւ Պորտուգալիայում հայրապետական պատվիրակի փոխանորդ տեր Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը: Հնչել են երկու երկրների ազգային օրհներգերը, որից հետո Խորեն Տերտերյանը շնորհավորական խոսք է ասել:**

**Հաստկապես Հայաստանի անկախությունից հետո մեծաթիվ հայաստանցիներ մեկնել են Իսպանիա՝ ձեւավորելով համեմատաբար նոր հայկական համայնք: Այս հանգամանքը նկատի առնելով՝ անչափ կարեւոր է Իսպանիայում Հայաստանի բարձրագույն դիվանագիտական ներկայացուցչություն ունենալը:**

**Հ. Ա.**

# Խաղաղության գինը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Մինչ Հայաստանը պայքարում է բարելավելու իր տնտեսությունը, պատերազմի սպառնալիքները դարձյալ ուրվագծվում են նրա սահմաններում: Թուրքիան եւ Ադրբեջանը, իրար միացնելով իրենց ուժերը, փորձում են սաստկացնել հոգեբանական գրոհն ընդդեմ Հայաստանի:

Ճիշտ է, Ադրբեջանը վերանայելով իր դիրքորոշումը՝ վերջին րոպեին հանդես եկավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում իր նախաձեռնությամբ քննարկման ներկայացված բանաձեւի նախագիծը հետաձգելու առաջարկությամբ, բայց բացառված չէ, որ նման բանաձեւեր հետագայում դարձյալ ներկայացվեն, եւ այդ դեպքում, անշուշտ, Թուրքիան իր «առաքելությունը» բարձր մակարդակով առաջ կտանի իսլամական կոնֆերանսի երկրներում, ինչպես տեղի ունեցավ անցյալ անգամ: Չմոռանանք նաեւ, որ այդ ժամանակ մեր հարեւան, «եղբայրական» քրիստոնյա Վրաստանը քվեարկեց ի նպաստ Ադրբեջանի: Բացառված չէ, որ նույնը կատարվի հաջորդ անգամ: Մեկ այլ քրիստոնյա երկիր՝ Ուկրաինան եւս պաշտպանեց այդ ժամանակ Ադրբեջանին՝ նախագահ Յուշչենկոյի կարգադրությամբ: Հույսեր փայփայենք, որ Յանուկովիչի Ուկրաինան ավելի հավասարակշռված դիրքորոշում կդրսեւորի, եթե առիթը ներկայանա:

Մինչ այդ, որոշ խորհրդանշական իրադարձություններ չեն թողնում, որ թուլանա վերոնշյալ հոգեբանական գրոհը: Դրանցից մեկը Բաքվի կենտրոնում աշխարհի ամենամեծ դրոշը բարձրացնելու նախագահ Իլհամ Ալիեւի փառամոլական ծրագիրն էր: Դրոշը, հակառակ նախատեսվածի, Գինեսի գրքում հայտնվելու թեկնածու դարձավ որպես «ամենակարճ ժամանակ ծածանված» պետական խորհրդանշան, քանի որ ծվեն-ծվեն եղավ քամիներից հենց բարձրացված օրը եւ հոդս ցնդեցին դրա վրա ծախսված 20 միլիոն եվրոները:

Խորհրդանշականը՝ մի կողմ: Առավել լուրջ ահազանգը այդ նույն դրոշի ծածանումը Ստեփանակերտում տեսնելու Ալիեւի հայտարարությունն էր, որին միացավ անմիջապես Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն: Նոր սահմանադրությունը հավանության արժանացնելու իր քարոզչական աշխատանքների ծիրում նա այցելեց հայ-թուրքական սահման եւ նույնիսկ, սահմանն անցնելով, մտավ Նախիջեւանի պատմականորեն հայկական տարածք, որ գտնվում է ազերի զավթիչների ձեռքում եւ այնտեղի բնակիչներին «խաղաղություն, կայունություն եւ անդորրություն» խոստացավ, նշելով. «Եթե տեւական խաղաղություն հաստատվի, տարածաշրջանը կդառնա առավել բարգավաճ... Բայց խաղաղություն չի կարող լինել, մինչեւ Հայաստանը Ադրբեջանին չվերադարձնի իր զավթած տարածքները»:

Մյուս կողմից, չնայած Թուրքիան Հայաստանի հետ ստորագրել է հայտնի արձանագրությունները, դրանք առայժմ դարակներում դարսված մնում են, եւ արտգործնախարարը, որ անձամբ էր ստորագրել այդ արձանագրությունները, այժմ նախապայմաններ է դնում Հայաստանի եւ համաշխարհային հանրության առջեւ Ղարաբաղի հակամարտությունը հօգուտ Ադրբեջանի լուծելու հիմնահարցում: Թվում է, թե Թուրքիան ինքնավստահության նոր աղբյուրներ է գտել, որ այդքան միակողմանի եւ անկախ քաղաքականություն է վարում: Այդ աղբյուրներից մեկը հավանաբար Ռուսաստանին ավելի մոտենալն է՝ հակակշռելու համար Արեւմուտքի ազդեցությունը: Մյուսը՝ նավթադոլարներով հարուստ իսլամական աշխարհի աջակցությունը կարող է լինել:

Արձանագրությունները տիկին Քլինթոնի «հոգեզավակներն» էին: Սակայն կարծես նա չի կարողանում Անկարային համոզել, որ այդ գաղափարը իր տրամաբանական ավարտին հասնի:

Դիվանագիտական գետնի վրա լարվածությունը շատ ուժեղ է: Սակայն առավել աղետաբեր են հայաստանա-ադրբեջանական սահմանագծում հաճախակի դարձած հրադադարի խախտումները, որոնք մարդկային կյանքեր են խլում երբեմն: Եվ պատահական չէ բոլորովին, որ Բաքուն այդ խախտումները «սարքում» է ամենամարտավարական պահերին: Դրանցից մեկն, օրինակ, տեղի ունեցավ Մոսկվայում Մայնդորֆյան համաձայնությունը ստորագրելուց անմիջապես հետո: Մյուսը՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Բաքու այցելության օրերին: Հավանաբար նպատակը մի քանի հայ զինվորների գերեվարելն էր եւ հետո հեռուստակայաններով ցույց տալու նրանց որպես զավթիչների: Բարեբախտաբար ծրագիրը ձախողվեց, եւ ազերիները իրենց զոհեր թողեցին հայկական սահմանում:

Վրդովեցուցիչն այն է, որ ԵԱՀԿ-ի բանագնացները, ինչպես նաեւ այլ դիվանագետներ եւ պետական այրեր, երկու կողմերին էլ հավասարապես կոչ են անում զսպվածություն ցուցաբերել, փոխանակ մատնանշելու կոնկրետ ագրեսորին: Ալիեւն իր ռազմատենչ հայտարարություններով պատերազմի կոչ է անում, խախտում է հրադադարը եւ հետո զոհի դերն է ստանձնում: Օգոստոսի 10-ին նա զգուշացրեց, որ «պատերազմն ավարտված չէ»: «Մենք ամեն րոպե պատրաստ պետք է լինենք ազատագրելու մեր հողերը... մենք մեր բոլոր ֆինանսական ռեսուրսները մոբիլիզացրել ենք ուժեղացնելու համար մեր ռազմական ուժերը, եւ այսօր Ադրբեջանի բանակը կարող է ամեն տեսակի առաջադրանք իրականացնել», ասաց նա:

Հակառակ նման հոխորտանքներին եւ նավթադոլարների ներդրումներին, մասնագետները հավաստացած են, որ ազերի ռազմական ուժերը չեն կարող մրցել հայկական կողմի ուժերի հետ: Այդուհանդերձ գլխավոր հարցը, թե պատերազմի բռնկման պարագայում ի՞նչ դեր են խաղալու գերպետությունները ու տարածաշրջանային երկրները, մնում է առկախ: Ուժերի ինչպիսի՞ համադրում կլինի, ի՞նչ դիրք կորդեգրի Մ. Նահանգները, Թուրքիան կմիջամտի՞ արդյոք եւ ամենակարեւորը՝ Մոսկվան որեւէ մասնակցություն կունենա՞, թե՞ ոչ: Այս բոլոր հարցերը պատասխան են պահանջում:

Մեդվեդեւը երկարաձգեց Հայաստանում ռուսական ռազմական բազայի պայմանագիրը՝ հավաստացնելով, որ կպաշտպանի Հայաստանի տարածքը, բայց այդ երաշխավորությունը հարցականի տակ է մնում, որովհետեւ Մոսկվան մյուս կողմից C-300 հրթիռային համակարգեր է վաճառում Ադրբեջանին: Մեդվեդեւի այցը Բաքու նպատակ ուներ ազերի գազից անսահմանափակ քանակությամբ օգտվելու պայմանագիր պոկել Ալիեւից: Հնարավո՞ր է, որ Մոսկվան հայկական արյունը փոխարինի ադրբեջանական գազով: Մեր ռազմավարական գործընկերը կարծես գնալով նվազ վստահելի է դառնում: Չնայած Մեդվեդեւը օգոստոսին կրկնեց, որ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է, արտգործնախարարության գլխավոր օգնական Սերգեյ Պրիխոդկովը հետագայում շեշտեց, որ Ռուսաստանը չի երաշխավորում պաշտպանել Հայաստանին՝ ընդդեմ Ադրբեջանի: Ռուսաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ կարող է չմիջամտել պատերազմական գործողություններին, եթե տեսնի, որ դրանք անմիջականորեն վնաս չեն հասցնում Հայաստանին կամ այնտեղ գտնվող ռուսական բազային:

Այնպես որ, ի տես այս բոլոր զարգացումների եւ ռազմավարական հավասարումների կամ հակակշիռների, Թուրքիան ի վիճակի է իրեն վերապահելու Հայաստանի համար խաղաղության գինը որոշելու խաղաքարտը:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**(«Արմինյն միրոր սփեքթեյթր»)**
**Թարգմ. Հ. Ծ.**

# Փակվել է Կահիրեի «Գալուստյան վարժարանը»

Կծիկը քանդվել սկսվեց «Մելգոնյանով»: Այժմ, տխուր է արձանագրել, մանավանդ այդ կրթօջախում կրթություն ստացած մեկի համար, որ հերթը հասել է Կահիրեի «Գալուստյան ազգային վարժարանին»: Կանադահայ համայնքի «Հորիզոն» պարբերականի գլխավոր խմբագիր **Վրեժ-Արմեն Արթինյանի** փոխանցմամբ (որին Կահիրեի «դպրոցների վերահսկիչ մարմնի» անդամ Թովմաս Զաքարյանն է իրազեկել), այս ուսումնական տարվանից փակվել է 1854 թվին Կարապետ Գալուստյանի բարերարությամբ հիմնադրված, սկզբում «Խորենյան» (պատմահայր Մովսես Խորենացու անունով), իսկ 1897-ից բարերարի անունով վերանվանված «Գալուստյան վարժարանը»: Այնտեղ սովորող 45 աշակերտները այս տարեշրջանից սկսած միավորվել են Կահիրեի Հելիոպոլիս թաղամասում գործող «Նուբարյան վարժարանին», որն ունի 105 աշակերտ (1):



*«Գալուստյան վարժարան»-ի երբեմնի շենքը*

Ըստ պրն Զաքարյանի, աշակերտների թիվը «տարուէ տարի կը նուազէր», «աշակերտներուն կէսէն աւելին խառնածին են», «նրանց մեծամասնութիւնը արաբախօս է» եւ «արդիական դասագիրքերու պակասը՝ զգալի»: Սրանք փաստեր են, որոնք առավել կամ նվազ չափով վերաբերում են նաեւ այլ գաղութներին եւ պետք է ուշադրության առարկա դառնան հետագա «փակումների» առաջքն առնելու համար:

Պետք է առանձին հպարտությամբ նշել, որ եգիպտահայ վարժարանների աշակերտների համաշխարհային հավաքները, որոնք մինչեւ վերջերս սովորաբար տեղի էին ունենում երկու տարին մեկ անգամ տարբեր վայրերում, սկզբնավորվել են հենց «Գալուստյան վարժարանի» նախկին սաների նախաձեռնությամբ, որպես միայն այդ կրթօջախի շրջանավարտների հավաքներ: Հետագայում է, որ գաղափարը վարակիչ է դարձել եւ ընդգրկել «Նուբարյան», «Պողոսյան» եւ այլ վարժարանների շրջանավարտներին եւս: Հիշատակման արժանի է նաեւ այն, որ այդ հավաքներից առաջացած նյութական գումարները հատկացվել են հայրենիքում տարբեր ծրագրերի իրականացմանը:

Մինչեւ 1897 թիվը «Գալուստյանի» աշակերտների թիվը չի գերազանցել 80-ը: Նույն տարում բացվել է մանկապարտեզի բաժինը, որը եգիպտահայ գաղութում առաջինն էր: Այնտեղ 4-7 տարեկան երեխաները սովորել են երգեցողություն, արտասանություն, ձեռարվեստ եւ մայրենի լեզվի այբուբենը: 1907-ին դպրոցը նախկին «Դարբ էլ Գինեյնե» թաղամասից փոխադրվել էր «Բուլաք» թաղամասի նորակառույց շենքը՝ տղաների եւ աղջիկների առանձին բաժիններով: Նոր շենքի շինարարության ծախսերը մեծ մասամբ հոգացել էր Պողոս Նուբար Փաշան: Հաջորդող տարիներին աշակերտության թիվը բարձրացել էր մինչեւ 500-ի, իսկ 1945-ին 10-ամյա միջնակարգ վարժարան դառնալուց հետո՝ նույնիսկ 800-ի (50-ական թվերին): Վաքունականներից ծայր առած արտագաղթի եւ հայրենադարձության հետեւանքով մոտ 300-ով կրճատվել էր այդ թիվը, եւ փակվել էին վերջին 9-րդ եւ 10-րդ դասարանները: Ուսումը ձրի էր աշակերտության մեծամասնության համար: Հատուկ ավտոբուսներ հեռավոր թաղամասերից վարժարան եւ օրվա վերջում տուն էին փոխադրում աշակերտներին: Բոլոր ծախսերը (ուսուցիչների աշխատավարձ, դասագրքեր, գրենական պիտույքներ, կեսօրվա ընդմիջման ճաշ եւ այլն) ծածկվում էին բարերար Կարապետ Գալուստյանի կտակած կալվածքներից գոյացած հասույթներից: Վարժարանը ղեկավարվում էր 5-7 անձերից բաղկացած հոգաբարձուների մարմինը, որը նշանակվում էր տեղի «Ազգային իշխանության ուսումնական խորհրդի» կողմից: Այդ խորհրդին էին վերապահված ուսուցչական կազմի համալրման եւ բյուջեի գոյացման պարտականությունները: Խորհրդին աջակցում էր «Տիկնանց խնամակալությունը», որ կարոտյալ երեխաներին օրական մեկ ճաշ, կաթ, ձկան յուղ, բժշկական օգնություն եւ գրենական պիտույքներ էր հայթայթում:

1978-ին Կահիրեի կառավարության պետական ծրագրման եւ կամուրջների շինարարության պատճառներով քանդվել էին «Գալուստյանի» տղաների եւ աղջիկների առանձնաշենքերը, իսկ մնացած 16 դասարանները տեղավորվել էին վարժարանի մանկապարտեզի շենքում:

Փակման տխուր փաստի արձանագրումը երեւի պակասավոր կլիներ, եթե չհիշատակեի «Գալուստյանի» նվիրյալ տնօրենների եւ դաստիարակների գոնե մի քանիսի անունները՝ Թաշճյան, Նալբանդյան, Պատիկյան, Վարդյան, Քրիսյան, Ծաղկունի, Մարգարյան, Մոմճյան, Աճեմյան, Ծերունյան, Տրդատյան, Ղազարոսյան, Գեւորգյան, Զաքարյան, Լիլոզյան, չմոռանալով ներողություն հայցել բոլոր մյուսներից, որոնց չեմ հիշատակում: Նրանց շունչն ու ներկայությունը այդ կրթօջախում ստեղծել էին հայրենասիրական այն մթնոլորտը, որով սերունդներ են դաստիարակվել: Այդ սերունդների համար այսօր անշուշտ ցավալի է արձանագրել իրենց մայր օջախի փակման փաստը:

**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ**

*(1) Ըստ Եգիպտոսից մեկ այլ աղբյուրի, ճիշտ է, փակման որոշումը առնված չէ, բայց տեղափոխումը կատարվելու է հաջորդ տարի:*

# Հրազդան Զեյթլյանը՝ Լոս Անջելեսի նախագծային խորհրդի անդամ

**Կուսակցական գործիչ եւ խմբագիր Սարգիս Զեյթլյանի եւ գրող-հետազոտող Սոնա Զեյթլյանի որդին՝ ճարտարապետ Հրազդան Զեյթլյանը նշանակվել է Լոս Անջելեսի քաղաքապետարանի նախագծային խորհրդի անդամ, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի սեպտեմբերի 11-ի համարը:**

**Խորհուրդը, որը կազմված է քաղաքի ամենահեղինակավոր եւ տաղանդավոր ճարտարապետներից, քաղաքաշինարարներից եւ կանաչապատման մասնագետներից, տարեկան նիստեր է գումարելու՝ քննարկելու կարեւոր օբյեկտների շինարարական ծրագրերը: Նման խորհուրդը հիմնվել էր 1980-ական թվերին քաղաքապետ Թոմ Բրեդլիի պաշտոնավարության օրոք, եւ այժմ վերակենդանացվում է նրա գործունեությունը:**

**Միաժամանակ Զեյթլյանը ընտրվել է Լոս Անջելեսի բիզնես խորհրդի կառավարման վարչության անդամ: Նա 21 տարվա փորձառություն ունի եւ հիմնադիրն է Struere ճարտարապետական-հետազոտական կենտրոնի, որի նպատակն է տեխնոլոգիաների նոր հայտնագործումները օգտագործել շինարարության մեջ: 1996-1998 թվերին եղել է Architect Magazine պարբերականի խմբագրական կազմի անդամ: Ծնվել է Այնճարում (Լիբանան), ավարտել Նշան Փալանճյան ճեմարանը, այնուհետեւ՝ Բեյրութի ամերիկյան համալսարանը, իսկ ԱՄՆ-ում՝ Կոլումբիա համալսարանը եւ Ռոուդ Այլնդի նախագծային վարժարանը: Ներկայումս բնակվում է Լոս Անջելեսի արեւմտյան մասում եւ շատ ակտիվ է հայկական համայնքում:**

**Հ. Ծ.**

ԱԶԳ

# Միջազգային

## Կելինն իհարկե չի ասել այդպիսի բան

### *Ադրբեջանցի լրագրողների հերթական սուտը*

Սեպտեմբերի 25-ի համարում **«Ազգը»**՝ «Բաքվի «մոսկվացի տղերքը»» հոդվածում հրապարակեց ՌԴ ԱԳՆ 4-րդ բաժանմունքի պետ Անդրեյ Կելինի հայտարարությունները՝ արված ադրբեջանական «ԱՊԱ»-ի հետ զրույցում: Մենք նախապես ներողություն խնդրեցինք ընթերցողներից, եթե ստիպված լինեինք հերքել Կելինի խոսքերը, քանի որ «ԱՊԱ»-ն հայտնի է ամենատարբեր պաշտոնյաների հայտարարությունները խեղաթյուրելու վարպետությամբ: Այսպես. ռուս դիվանագետը, ըստ ադրբեջանական գործակալության նշել էր. «Անվանել Ղարաբաղը բանակցությունների երրորդ կողմ՝ անհնար է: Մի ժամանակ Երեւանում կային մարդիկ, որոնք պահանջում էին դա, սակայն հետո հասկացան, որ եռակողմ բանակցություններից հնարավոր չէ արդյունք ակնկալել. շատ ավելի հեշտ է բանակցել երկուսով»: Իսկ թե ինչ է իրականում ասել Կելինը, հայտնի դարձավ երեկ դիվանագետի՝ News.am կայքին ուղղած պատասխան նամակից. «Առաջին հերթին, նշեմ, որ մտադիր չեմ մեկնաբանել այն, ինչ չեմ ասել, կամ այս, կամ այն մեկնաբանությունները: Ցավոք, հայտնաբերել եմ եւ այլ սխալներ, որ հրապարակվել են նորությունների հեռագրային գործակալությունների կողմից՝ սեպտեմբերի 24-ին հարավկովկասյան պետությունների լրագրողների մեծ խմբի հետ իմ զրույցի վերաբերյալ: Զրույցը Ռուսաստանի ԱԳՆ-ում տեւել է մոտ մեկուկես ժամ: Մենք ամենատարբեր թեմաներ ենք քննարկել: Հիմնականում՝ 2008 թ. օգոստոսյան իրադարձությունների հետեւանքները, Վրաստանի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հետ հարաբերությունների հեռանկարները: Եղել են մի քանի հարցեր ղարաբաղյան կարգավորման ընթացիկ իրավիճակի վերաբերյալ, որոնք մերթընդմերթ են հնչել: Լավ հիշում եմ, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի թեման այդ հարցերում չի արծարծվել: Իսկ ձեւաչափի մասին, որով ընթանում են կարգավորման բանակցությունները, իսկապես խոսվել է: Ես պատասխանել եմ այն իմաստով, որ բանակցությունները մոտ 20 տարի ընթանում են, ունեն իրենց բարդ պատմությունը, եւ դժվար թե որեւէ մեկը հիմնավոր գիտի այդ մանրամասները: Այս ընթացքում փոխվել է նաեւ ձեւաչափը: Սկզբնական փուլում, որքան հայտնի է, Ղարաբաղի ներկայացուցիչները բանակցություններին մասնակցել են: Սակայն վերջին շրջանում դա այդպես չէ: Կողմերը թերեւս եկել են այն համոզման, որ այսպիսի ձեւաչափը այս փուլում ավելի ռացիոնալ է: Վստահ եմ, որ նաեւ այսօր ղարաբաղցիներն ամենաակտիվ կերպով գործակցում են Երեւանի հետ այդ բարդ խնդրում: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ հետագայում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները չեն մասնակցելու բանակցային գործընթացին: Այն մասին, թե երբ այդ պահը կգա, դեռ պետք է պայմանավորվեն հակամարտության կողմերը: Լրագրողներին էլ խորհուրդ կտայի ավելի ուշադիր լինել արտահայտություններ ընտրելու հարցում, առավել եւս՝ նման զգայուն խնդրում, ինչպիսին ղարաբաղյան հակամարտությունն է, եւ սենսացիաներ, ենթատեքստեր չփնտրել այնտեղ, որտեղ դրանք չկան: Մեր մոտեցումներում որեւէ փոփոխություն չի եղել», նշել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը:

Այն ժամանակ, երբ Բաքուն պաշտոնական եւ անդրկուլիսյան մակարդակներով փորձում է մոսկովյան պաշտոնյաների գրավել, նրանցից ոմանք հերքում են այն, ինչ իրենց փոխարեն ասում են ադրբեջանական կայքերը:

Հ. Ա.

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

## Լուժկովն այլեւս քաղաքապետ չէ, բայց կմնա Մոսկվայում



**Սեպտեմբերի 28-ի առավոտյան հրապարակվել է ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրամանագիրը, որի համաձայն Յուրի Լուժկովն ազատվում է Մոսկվայի քաղաքապետի պաշտոնից՝ «նախագահի վստահությունը կորցնելու» պատճառով: Քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակված Լուժկովի առաջին տեղակալ Վլադիմիր Ռեսինը:**

**Մոսկվայի վարչակազմի աղբյուրներ վկայակոչելով՝ ՌԻԱ եւ Ինտերֆաքս գործակալությունները հաղորդում են, որ Լուժկովը մտադիր է այսուհետեւ էլ «աշխատել ի նպաստ քաղաքի»:**

**Ինքը՝ Լուժկովը դեռ չի մեկնաբանել իր պաշտոնաթողությունը: Հրամանագրի հրապարակումից հետո հայտնի դարձավ, որ նա իր աշխատասենյակում է, որտեղ պաշտոնյաներից շնորհավորանքներ է ընդունում արդեն անցած 74-ամյակի առթիվ: Լուժկովը Մոսկվայի քաղաքապետն էր 1992 թվականից:**

**Նաեւ հայտնի է դարձել, որ նախագահ Մեդվեդեւը մտադիր չէ մոտ ժամանակներս հանդիպում ունենալ Լուժկովի հետ: Նախագահի մամլո քարտուղար Նատալյա Տիմակովան լրագրողներին հայտարարել է, որ քաղաքապետը ուներ պաշտոնը թողնելու ավելի մեղմ տարբերակ, այսինքն՝ հեռանալ «սեփական ցանկությամբ», բայց Լուժկովը դեմ էր այդ տարբերակին:**

**Նախօրեին Լուժկովը աշխատանքի էր դուրս եկել արձակուրդն Ավստրիայում անցկացնելուց հետո: Վերջին շաբաթներին ռուսական լրատվամիջոցներում նրա դեմ ուղղված տեղեկատվական արշավ էր ծավալվել: Տարբեր հրատարակություններ հաղորդել էին, թե պաշտոնաթողությունից հետո Լուժկովը կարող է մեկնել Ավստրիա:**

**Ինչ վերաբերում է ՌԴ իշխանություններին, նրանք ներկայումս հարմար թեկնածու են փնտրում Մոսկվայի քաղաքապետի պաշտոնի համար:**

## Կիմ Չոն Իրը մնում է ԿԺԴՀ ղեկավար

Փենյանում սեպտեմբերի 28-ին 1980-ից հետո առաջին անգամ անցկացվել է Կորեայի Աշխատանքային կուսակցության կենտկոմի քաղբյուրոյի նիստ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ քաղբյուրոյի անդամները Կիմ Չոն Իրին ընտրել են կուսակցության գլխավոր քարտուղար:

ԿԺԴՀ հեռուստատեսությունը հաղորդել է, որ Աշխատանքային կուսակցության պատվիրակների համագումարում հնչելու է կարեւոր հայտարարություն: Ավելի վաղ փորձագետները ենթադրություն էին արել, թե համագումարում Կիմ Չոն Իրը իրավահաջորդ կդարձնի իր կրտսեր որդի Կիմ Չեն Ունին: Սակայն Փենյանում պաշտոնական անձինք հերքել են վերջինիս իշխանության գլուխ անցնելու հետ կապված տեղեկությունները:

Չնայած այս ամենին, քաղբյուրոյի նիստի նախօրեին Կիմ Չոն Իրը հյուսիսկորեական բանակի գեներալի կոչում է շնորհել իր կրտսեր որդուն: Գեներալի կոչում շնորհվել է նաեւ Կիմ Չոն Իրի կրտսեր քրոջը՝ Կիմ Գեն Հիին: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, հյուսիսկորեացի առաջնորդի հիվանդության ժամանակահատվածներում երկիրը փաստորեն ղեկավարել է նրա քրոջ ամուսին Չան Սոն Թեկը:



Կիմ Չոն Իրը Աշխատանքային կուսակցությունը ղեկավարում է 1994-ից եւ երկրի առաջնորդն է հոր՝ Կիմ Իր Սենի մահից ի վեր: Վերջին տարիներին լրատվամիջոցներում քանիցս հաղորդվել է Կիմ Չոն Իրի վատառողջության եւ նույնիսկ հավանական մահվան մասին, սակայն Փենյանը մշտապես հերքել է այդ լուրերը, դրանք անվանելով «Արեւմուտքի քարոզչություն»:

## Ֆրանսիայից արտաքսված գնչուների 90 տոկոսը կրկին Արեւմտյան Եվրոպայում է

**Որպես անօրինական ներգաղթյալներ Ֆրանսիայի արտաքսված գնչուները մեկնում են Մեծ Բրիտանիա, Գերմանիա կամ Իսպանիա: Այդ մասին հաղորդում է «Սքայ նյուզ» հեռուստաընկերությունը՝ վկայակոչելով գնչուական համայնքի ներկայացուցիչներին: Հեռուստաալիքի տվյալներով՝ վերջին ամիսներին Ֆրանսիայից արտաքսված գնչուների մոտ 90 տոկոսը արդեն վերադարձել է Արեւմտյան Եվրոպա:**



**Արտաքսվածների խոսքերով՝ իրենք ուրիշ ելք չունեն, քանի որ հայրենիքում՝ Ռումինիայում իրենք ստիպված են ապրել չքավորության եւ խտրականության պայմաններում:**

**«Սքայ նյուզը» նշում է, որ ներկայումս Եվրոպայում ապրում է մոտ 12 մլն գնչու, եւ նրանք արագորեն բազմանում են:**

**2010-ի օգոստոսին Ֆրանսիայի իշխանությունները սկսեցին գնչուներին արտաքսել Ռումինիա եւ Բուլղարիա: Ներկայումս արտաքսվածների թիվն անցնում է 1200-ից: Թեեւ Ֆրանսիան իր գործողությունները բացատրում է անօրինական ներգաղթի դեմ մղվող պայքարով, ԵՄ ղեկավարությունը խստիվ քննադատում է այդ դիրքորոշումը՝ դրանում տեսնելով խտրականություն ըստ էթնիկական պատկանելության:**

## «Բեռլին-Բաղդադ ճեղընթացը» հատորի գրախոսականը «Ֆայնենշըլ թայմսում»

***Օքսֆորդ համալսարանի Մերձավոր Արեւելքի կենտրոն բաժնի տնօրեն եւ «Արաբների պատմությունը» գրքի հեղինակ Յուջին Ռոգանը «Ֆայնենշըլ թայմս» պարբերականում գրախոսել է Անգլիայում «Ալեն Լեյն» հրատարակչության լույս ընծայած Շոն Մքմիկինի «Բեռլին-Բաղդադ ճեղընթացը: Օսմանյան կայսրությունը եւ աշխարհին տիրանալու Գերմանիայի ձգտումը, 1898-1918» խորագրով հատորը (496 էջ, 25 ֆունտ ստեռլինգ) եւ եզրակացնում, որ բացի իսլամի վերլուծություններում հեղինակի չափից ավելի կառչելը գերմանացի արեւելագետների ռասիստական տեսակետներից՝ հատկապես վերջաբանում, ուսումնասիրությունը խիստ գրավիչ եւ ուսանելի է:***

***Գրախոսականը արտատպված է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 7-ի համարում, որտեղից թարգմանաբար քաղում ենք հետեւյալ տեղեկությունները:***

Առաջին համաշխարհային պատերազմի բարձրակետում Ջոն Բուկանը մի թրիլլեր գրեց, որի հիմքում ընկած էր Բրիտանական կայսրությունը տապալելու նպատակով իսլամական ծայրահեղական մի շարժում ստեղծելու գերմանական դավադրական ծրագիրը: «Գրինմենթլ» (կանաչ քող) գիրքը հայտնի դարձավ այն իմաստով, որ դեռեւս 1916-ին հեղինակը կարողացել էր ճիշտ գուշակել դեպքերի զարգացումը: Գերմանացիները իրոք ասիացի մահմեդականներին հրահրում էին ըմբոստանալ բրիտանական իշխանության դեմ:

Շոն Մքմիկինը երկրորդ պատմաբանն է, որ բացահայտում է «ճշմարիտ պատմությունը»: Նա բազմաթիվ նոր փաստեր է ավելացնում (ռուսական, օսմանյան, գերմանական եւ ավստրիական արխիվներից) Անտանտի երկրների դեմ ջիհադ (սրբազան պատերազմ) մղելու գերմանա-օսմանյան ջանքերի վերաբերյալ 1994 թ. Փիթեր Հոփքըրքի ուսումնասիրությանը, որը կրում էր «On Secret Service East of Constantinople: The Plot to Bring Down the British Empire» («Աշխատելով Կոստանդնուպոլսի արեւելյան մասի հակահետախուզությունում. Բրիտանական կայսրությունը տապալելու դավադրությունը») խորագիրը եւ հիմնված էր գլխավորապես բրիտանական արխիվների նյութերի վրա:

1898-ին Գերմանիայի Վիլհելմ Բ կայսրը պետական այցով Օսմանյան կայսրությունում գտնվելով՝ հայտարարել էր, որ իր երկիրը «սուլթանի եւ աշխարհով մեկ սփռված նրա 300 միլիոն մահմեդականների հավիտենական բարեկամն է»: Գերմանա-իսլամական բարեկամության այս նոր քաղաքականության «ճարտարապետը» հետախույզ-գիտնական բարոն Մաքս ֆոն Օփենհայմն (1860-1946) էր, որն իր Կահիրեի բնակարանից հակաբրիտանական ծավալուն զեկույցներ էր ուղարկում Գերմանիայի արտգործնախարարություն: Դրանց արդյունքում երեւան եկավ Բեռլինը երկաթգծով Պարսից ծոցին միացնելու ծրագիրը:

1899-ի դեկտեմբերին օսմանյան կառավարությունը «Դոյչե բանկի» գլխավորած գերմանական մի խմբին տալիս է իր համաձայնությունը Կոնիայից (Բաղդադի վրայով) Բասրա երկաթգիծ կառուցելու ծրագրին: Դա տեւելու էր ութ տարի: Օսմանցիներին դա հնարավորություն էր տալու Սիրիայի եւ Միջագետքի տարածքներում ամրապնդելու իրենց ներկայությունը, իսկ գերմանացիներին՝ ցամաքային մարտավարական մի կամուրջ ստեղծել, որը երեք օրով կկրճատեր Միջերկրականից Հնդկաստան (Բրիտանական կայսրության մայր երակը) ճամփորդելու ժամանակը:

1914-ի նոյեմբերին, երբ օսմանցիներն իր վերջո մտան պատերազմի մեջ, սուլթանը ջիհադ հայտարարեց Անտանտի երկրների դեմ: Շարժումը մտահոգություններ առաջացրեց Անգլիայում եւ Ֆրանսիայում: Բայց առանձնապես արձագանք չգտավ մահմեդական աշխարհում: Գերմանացիները, չհրաժարվելով իրենց մտադրությունից, տեղական նման շարժումներ ստեղծեցին Աֆղանստանում, Պարսկաստանում, Սուդանում, Լիբիայում, Միջագետքում, հույս փայփայելով, որ դրանք կմիանան հետագայում: Տեղական շարժումները ղեկավարում էին Օսկար դոն Նիդերմեյերի (Աֆղանստան), Լեո Ֆրոբենիուսի (Կարմիր ծովի շրջան) եւ Վիլհելմ Վասմուսի (Պարսկաստան) նման արկածախնդիրները: Եթե գերմանացիները հաղթանակեին պատերազմում, այս մարդիկ Արաբիայի Լոուրենսի նման հայտնի կդառնային:

Գերմանա-օսմանյան դաշինքի պարտությունը, ճակատագրի հեգնանքով, հենց Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման ձախողումը դարձավ, «պատերազմի ավարտին այն դեռ ամբողջացած չէր հաշվարկային որոշ խնդիրների պատճառով: Այդ ծանր աշխատանքներում ներառված էին նաեւ դեպի սիրիական անապատները մահվան ճանապարհը բռնած հազարավոր հայեր, որոնք փորձառություն չունեին երկաթգծեր կառուցելու, իսկ առանց երկաթուղու գերմանացիները զենք տեղափոխելու հնարավորություն չունեին»:

Հ. Ծ.

# Արմենչիկին Արցախում «մեգաաստղ» չհամարեցին

Ռաբիզի եւ կլկլոցի կարկառուն ներկայացուցիչ Արմենչիկի աննախադեպ համերգը Ստեփանակերտում այդպես էլ չկայացավ: Հայկական հարսանիքների «մեգաաստղի» համերգը artsakhnews.am կայքէջի փոխանցմամբ նախատեսված էր անցկացնել սեպտեմբերի 25-ին, սակայն 12.000 տոմսից վաճառվել է միայն 4 տոկոսը՝ 500 տոմս:

Կայքէջի փոխանցմամբ երգիչն ինքն էր ցանկություն հայտնել Արցախ գալ եւ բարեգործական համերգ տալ: Բարեգործական համերգի տակ երգիչը ենթադրում էր տոմսերի վաճառքից ստացված գումարը տրամադրել տեխնիկայի վարձակալության համար: Տեխնիկան պետք է բերվեր Հայաստանից, որովհետեւ տեղի կազմակերպիչները նմանատիպ հզոր տեխնիկա չունեն: 3 ժամյա վարձակալության գինն էլ արժե 20.000 դոլար:

Երեւանում «սուպեր աստղ» համարվող, մարզահամերգային համալիր լցնող, դպրոցական աղջիկների, քյարթու տղաների, տաքսու եւ երթուղայինի վարորդների կուռք հանդիսացող, գովազդային հոլովակներում «հայկական մեգաաստղ» ներկայացվող, տեղական արտադրության եւ ԱՄՆ ծագմամբ Արմենչիկին, որի՝ նյարդեր սղոցող ձայնը հնչում է անգամ այն ժամանակ, երբ հարդուկն ու թեյնիկն ես միացնում, Ստեփանակերտում փաստորեն արհամարհեցին:

Բացի «մեգաաստղ» լինելուց Հայաստանում Արմենչիկը շատերի համար «բարձրագույնի» եւ «վեհի» խորհրդանիշ է: Մի քանի օր առաջ հանդիպեցի դասընկերուհուս, ում դպրոցն ավարտելուց հետո չէի տեսել: Ընկերուհուս հարցին՝ «Ինչով ես զբաղվում», ասացի, որ լրագրող եմ: Նա էլ ոգեւորված հարցրեց. «Արմենչիկից հարցազրույց վերցրե՞լ ես» եւ բացասական պատասխան լսելով շարունակեց. «Էդ ինչ լրագրո՞ղ ես, որ Արմենչիկից հարցազրույց չես վերցրել»: Նա նաեւ պատմեց, որ մասնակցել է համալիրում Արմենչիկի համերգին, իսկ երգչի հետ լուսանկարը որպես սուրբ մասունք անմահացրել է բջջային հեռախոսի էկրանին: Դասընկերուհուս նմանները, ցավոք, շատ են:

Գուցե նրանց դուր է գալիս չափազանց պարզունակ երգի տեքստը, երեք նոտայով գրված երաժշտությունը կամ երգչի մղկտացնող ձայնը, գուցե այլընտրանք չունեն այլ երաժշտություն լսելու, որովհետեւ յուրաքանչյուր հայկական հեռուստաընկերություն օրվա մեջ մի քանի տասնյակ անգամ ցուցադրում է նրա տեսահոլովակները:

Ի տարբերություն Հայաստանի, որտեղ մինչեւ 10.000 դրամ կարող են վճարել Արմենչիկով հիանալու համար, Արցախում հասկացան, որ «Քուլա քուլան» կամ «Ուշ է, ուշ է»-ն 3500 դրամ էլ չարժե: Փաստորեն Արցախում երաժշտության հանդեպ ավելի պահանջկոտ են, բեմի արժեքը հասկանում են ու գնում միայն որակյալ երաժշտություն մատուցող երգիչների համերգի տոմսերը:

Բացի այդ արցախցիների՝ համերգի տոմսերը չգնելը կարելի է բացատրել նաեւ այն փաստով, որ տասնամյակներ շարունակ ապրելով ադրբեջանցիների հետ նրանք հասկացել են, թե ինչպիսի վտանգներ է պարունակում թուրքական երաժշտությունը, որը մատուցում է նաեւ Արմենչիկը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայաստանի մշակույթի օրերը Սիրիայում

Դամասկոսի «Դար էլ-Ասադ» օպերային թատրոնի մեծ դահլիճում սեպտեմբերի 23-ին կայացել է Սիրիայում Հայաստանի մշակույթի օրերի պաշտոնական բացումը: Բացման արարողությանը ներկա են գտնվել Սիրիայի կառավարության անդամները, խորհրդարանի պատգամավորները, դիվանագետներն ու հասարակական-քաղաքական գործիչները:

Սիրիայի արաբական հանրապետությունում Հայաստանի մշակույթի օրերին մասնակցելու նպատակով սեպտեմբերի 23-ին պաշտոնական այցով Դամասկոս էր ժամանել նաեւ Հայաստանի մշակույթի նախարարության պատվիրակությունը փոխնախարար Արթուր Պողոսյանի գլխավորությամբ: Սիրիայում մշակույթի նախարարության պատվիրակությանն ընդունել են փոխնախագահ Նաջի Ատտարը, մշակույթի նախարար Ռիադ Նաասան Աղան եւ տեղեկատվության նախարար Մոհսեն Բիլալը: Հանդիպումների ընթացքում նրանք նշել են, որ մշակութային համագործակցությունը երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունն ավելի ամրապնդելու համար լավագույն միջոց է: Մշակույթի նախարարի հետ հանդիպման ժամանակ քննարկվել են համատեղ հայ-սիրիական ֆիլմեր նկարահանելու հնարավորությունները: Արթուր Պողոսյանը սիրիական կողմին հրավիրել է 2011 թվականին Հայաստանում անցկացնելու Սիրիայի մշակույթի օրեր:

Սիրիայում Հայաստանի մշակույթի օրերը շարունակվում են:

Ի. Պ.

# Երեւանում է հայտնի դաշնակահար եւ դիրիժոր Վահագն Պապյանը



«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամն առաջին տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո ներկայացնում է «Վերադարձի» դասական երաժշտության չորրորդ փառատոնը: Հանդիսավոր բացումը փառատոնի տեղի է ունեցել սեպտեմբերի 22-ին:Արդեն ավանդական դարձած փառատոնն այս տարի եւս հնարավորություն կընձեռի ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ Գյումրիի եւ Վանաձորի հանդիսատեսին հանդիպելու արտերկրում ապրող եւ ստեղծագործող հանրահայտ հայ երաժիշտներին: Փառատոնի շրջանակներում այսօր երեկոյան՝ ժամը 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա դաշնակահար Վահագն Պապյանի մենահամերգը: Վահագն Պապյանը հաղթել է բազմաթիվ միջազգային մրցույթներում ու արժանացել տարբեր մրցանակների: Հոկտեմբերի 1-ի Գյումրիի Արվեստի Ակադեմիայում նույնպես տեղի կունենա Վ. Պապյանի մենահամերգը:

Փառատոնը տեւելու է մինչեւ հոկտեմբերի 17-ը, հովանավորն է Վիվա-Սել -ՄՏՍ ընկերությունը:

Ի. Պ.

# Գեղեցկություն որոնելու խաչվող ճանապարհներին



Երբ ներքին հայացքդ ի բնե, ի ծնե գեղեցկատենչ է, առավելապես երբ մթնոլորտն էլ նպաստող է, այդ որոնող աչքն ամենաաննշմար տեղում գեղեցկության հետքեր կգտնի:

**Լեւոն Լաճիկյանը** գեղեցկություն փնտրող էություն ունի: Հնաբույր միջավայրով ու մշակույթով ծննդավայր Գյումրին արդեն իսկ նրա գեղագիտական առաջին զգացողությունները ձեւավորող հոգեհարազատ վայրն է եղել: Տարիներ ի վեր, ուսումնառության ու կյանքային փորձություններով դրանք հղկվել, բյուրեղացել են. «Աչքս բացել եմ մի քաղաքում, ուր ամեն անկյուն պատմություն է ու մշակույթ: Ապրել եմ այդ միջավայրում, բայց չեմ զգացել գեղեցկությունները: Հետագայում, երբ ծննդավայրիցս հեռացա, իսկ ավելի ուշ էլ՝ երբ Փարիզում, Վենետիկում, Նյու Յորքում եղա, վերադարձա Գյումրի, նորովի գնահատեցի նրա գեղեցկությունը»:

Թերեւս արվեստն էլ այդպես է ծնվում, երբ վերաբերմունքը, սերը գիտակցական-իմացական է դառնում: Այս նոր վերաբերմունքը ծնում է նոր արտահայտչամիջոց: Գյումրին Լեւոնի համար դարձավ իր մեջ մշտապես առկա, գոյող նկարչի ստեղծագործական ներշնչանքը եւ ուրիշ էլ ինչպես, եթե ոչ քաղաքային միջավայրով ներկա պիտի լիներ հայրենի քաղաքը նրա գծանկարներում:

Երբ ասում է, որ քաղաքում քայլելը վայելք է, ու շուրջը ընչահեղձ լինելու չափ գեղեցիկ, ուրեմն որքան է այդ հուզումը, զգացումը լիաբուռ, ջերմ, որից էլ ծնվել է «Գյումրի, իմ սեր» Լաճիկյանի նկարաշարը: Քաղաքային միջավայրն առհասարակ Լաճիկյանի պատկերային արտահայտչաձեւերի հիմնական օբյեկտն է, սակայն ճշգրիտ կամ ուղղակի պատկերավորումների մեջ ներկա է ամենակարեւորը՝ խոհականությունն ու զգացողությունը՝ նուրբ մի աշխարհ, որով նա իր վերաբերմունքն է դրսեւորում կամ ավելի ստույգ՝ իր ներաշխարհի գույները (որակները):

Եթե ծննդավայր Գյումրին ներկա է իր ազդեցության անմիջական մեղեդիով, ապա Գորիսը՝ ինչպես է այդքան հարազատորեն ու ջերմորեն ընկալվել՝ միայն իրեն հատուկ ճարտարապետությամբ, շենքերի, բակերի, նուրբ, թրթռացող ելեւէջներով, բանաստեղծորեն, թափանցիկ, պայծառ թախիծով: Այս նույն զգացողությունը՝ սիրո ու գուրգուրանքի, պարուրում է նաեւ Կարսի ամրոցն ու Առաքելոց վանքը, պատմական մեր հայրենիքի լքված սուրբ անկյունները. «Արտասվելու չափ գեղեցիկ է Արեւմտյան Հայաստանը: Եվ եթե բնությունն անխաթար է մնացել, նույնը չես ասի բնակավայրերի մասին»: Եվ նա գծանկարում է այս մնացածը, այսօրվա եղածը. ու սա ժամանակակցի տարեգրության եւս մի եղանակ է, որն արձանագրում-ավանդվում է պատմությանը:

«Նա Արեւմտյան Հայաստանում եղել է մեկ անգամ, բայց հայացքի շրջագիծը ամբողջությամբ ընդգրկել է Արեւմտյան Հայաստանը, ինչպես իր ծննդավայր Գյումրին: Այնքան գեղեցիկ է նրա Կարսի ամրոցը եւ Առաքելոց վանքը, եւ իր տպավորություններն այնքան իրական ու ճշմարիտ են, որ կարող են ընկալվել որպես ժամանակագրություն: Նրա գծանկարներում ոչ մի կոր գիծ չկա: Ուղիղ գծերի միջոցով՝ իրական կյանք: Սա կենսագրություն է նաեւ, որ այս գծագրերի մեջ է դրված՝ ուղղամիտ ու ճշմարիտ ապրած»:

«Լաճիկյանը մշակութաբան է եւ էսթետ, երկուսն էլ արտահայտված են իր ստեղծագործության մեջ, առկա է թե՛ գեղագիտական իդեալը, թե՛ որոշակի գրական ռոմանտիզմը: Գրաֆիկայի սուղ արտահայտչամիջոցների պարագայում անգամ, նրա սեւ եւ սպիտակ կոնտրաստների մեջ տեսանելի է գույնը՝ երկնքի կապույտը, հողագույնը, կղմինդրների կարմիրը»:

«Նրա տաղանդի տարբերանշանը գեղագիտությունն է, որ լեյտմոտիվի պես արտահայտված է ստեղծագործության բոլոր դրսեւորումներում: Եվ ամենաէականը՝ նրա խոսքն ու գործը համահունչ են: Նա ոչ միայն քննադատում, չափանիշներ է ձեւավորում արվեստի դաշտում, այլեւ հետեւում է իր իդեալների չափանիշներին»:

Այսպիսի տպավորություններ հայտնեցին Ժոզեֆ Ավետիսյանը, Վարդան Դեւրիկյանը, Դանիել Երաժիշտը՝ «Նարեկացի» արվեստի կենտրոնում երեկ բացված Լեւոն Լաճիկյանի նկարչական առաջին ցուցահանդեսին:

Լաճիկյանի նկարչության մեջ գծի մաքրությունն ու տեխնիկական անթերի կատարումը ամենանկատելի որակն է, եւ հետաքրքրական է, որ պատկերին մթնոլորտ ապահովող գույնի բացակայությունն այստեղ լրացնում են իր ներքին զգացողական շերտերի նուրբ ելեւէջումները, որով էլ ապահովվում է հայկական այս քաղաքների ու բնակավայրերի հարազատ մթնոլորտը: Ասվածի վկայությունն է նաեւ իր հայացքի ներքո խաչվող ճանապարհների քաղաքային այլ պատկերներ. ահա Փարիզը, Վենետիկը, Ամստերդամը, Պրահան, Նյու Յորքը: Շատ հաջողված է «Հառաչանք կամուրջը»: Այդ հայացքի շրջագծում Երեւանը, ցավոք, միայն մեկ արտահայտություն է գտել՝ հնի ու նորի կոնտրաստներով: «Չկա Երեւանում այն թաղամասը, որով քայլելիս բանաստեղծական զգացողությամբ համակվես»: Ըստ նրա, հինը պատմություն է, դասագիրք, ու երբ վերացնում են, քաղաքն աղքատանում, դատարկվում է:

2006 թվականին Լեւոն Լաճիկյանն իր «Խաչվող ճանապարհներ» գրքի տպագրության առիթով գծանկարների մի փոքր արեց ու որոշեց գնալ Հակոբ Հակոբյանի մոտ՝ խորհուրդ իմանալու: Վարպետը հավանություն տվեց ու հորդորեց շարունակել. «Հակոբյանի խոսքն ինձ քաջալերեց վերադառնալու այն աշխարհը, որտեղ ես միշտ եղել եմ, գուցեեւ՝ ենթագիտակցորեն»:

Իսկ վարպետն այսպես է գնահատել Լաճիկյանի անդրանիկ փորձերը. «Անչափ տպավորված եմ Լեւոն Լաճիկյանի գծանկարներով: Դրանք տարածական զգացողությամբ, լավ կոմպոզիցիայով եւ նուրբ ու զգայուն արված աշխատանքներ են: Հեղինակն անթերի գծերի միջոցով թրթռուն ու կենդանի պատկերներ է ստեղծում»:

Լ. Լաճիկյանի հայացքը, որ նրբաճաշակորեն խաչվում է արվեստի ճանապարհներին նույն անկեղծ ու հուզական դրսեւորումներն ունի թե՛ գրի, թե՛ պատկերագծի ձեւերում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Փաստաբանները՝ ի նպաստ արվեստի

Օգոստոսի 12-ին, համագործակցելով կինոյի, երաժշտության եւ արվեստի ԱՐՓԱ հիմնադրամի հետ, ճանաչված փաստաբաններ Մարկ Կիրակոսն ու Բրայան Կաբատեքը Լոս Անջելեսի կենտրոնական մասում գտնվող իրենց «Գեղարվեստի կենտրոնում», որն իր ջազային դարաշրջանի գեղազարդ ինտերիերով տպավորիչ մի կառույց է, «հյուրընկալել» են լուսանկարիչ Դոն Հաննայի եւ քանդակագործ Հերվե Օնոյանի ստեղծագործությունները:

Դոն Հաննան, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի տեղեկատվության, լոսանջելեսաբնակ երաժիշտ, ֆիլմարտադրիչ եւ լուսանկարիչ է: Նրա երաժշտությունը հնչել է Օսկար մրցանակի ներկայացված կարճամետրաժ «Զբոսանք երեքշաբթի առավոտյան» ֆիլմում: Նա նաեւ «Կորածը» ֆիլմի պրոդյուսերի օգնականն է եղել: Նրա լուսանկարները «Ներշնչման րոպեներ» են հիշեցնում:

Հերվե Օնոյանը ծնվել է Փարիզում: Մազահարդարման հաջողակ կարիերայից հետո 32 տարեկանում տեղափոխվել է Լոս Անջելես եւ հայտնաբերել իր նոր տաղանդը՝ քանդակագործությունը: Նրա ոճին բնորոշ է «զգացմունքներին ձեւ տալու, քնածին զարթնեցնելու» հատկությունը:

«Ես հպարտ եմ, որ աշխատակցել եմ այդ երկու տաղանդավոր արվեստագետների հետ: Նրանց գործերում էներգիայի եւ նատուրալիզմի հսկայական պաշարներ կան, որոնց ազդեցությունը այցելուների վրա չափազանց հետաքրքրական էր տեսնել», ասել է ցուցահանդեսի առթիվ ԱՐՓԱ-ի արվեստի գործերի կուրատոր **Թամար Սինանյանը**:

Ավելացնենք, որ փաստաբաններ Մարկ Կիրակոսն ու Բրայան Կաբատեքը վերոնշյալ «Գեղարվեստի կենտրոնը» գնել են 2008-ին: Իսկ երկու արվեստագետների գործերին ավելի մոտիկից ծանոթանալ ցանկացողներին խորհուրդ է տրվում այցելել www.donhannah.com եւ www.onossian.com կայքերը:

Հ. Ծ.

# Անդրանիկ պարտությունը, այն էլ՝ ադրբեջանցիներից

*Կանայք եւս զիջեցին ամերիկուհիներին*

Շախմատի համաշխարհային օլիմպիադայի 7-րդ տուրն անհաջող էր մեր հավաքականների համար, որոնք պարտվեցին միեւնույն 1,5-2,5 հաշվով: Տղամարդիկ զիջեցին ադրբեջանցիներին, իսկ կանայք՝ ԱՄՆ-ի հավաքականին:



Տղամարդկանց մրցաշարում վճռորոշ եղավ Արման Փաշիկյանի պարտությունը Գադիր Հուսեյնովից: Արոնյան-Մամեդյարով, Ռաջաբով-Հակոբյան, Սարգսյան-Մամեդով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Ընդ որում վերջինն իր մրցավեճն ավարտեց Հակոբյանը, որը պայքարում էր հաղթանակի համար: Սակայն ի վերջո 91-րդ քայլին հաշտություն կնքվեց:

Մեր շախմատիստուհիների մրցավեճում էլ որոշիչ Աննա Զատոնսկիխից Լիլիթ Մկրտչյանի կրած պարտությունն էր: Դանիելյան-Կրաշ, Գալոյան-Աբրահամյան, Աղինյան-Բագինսկայթե պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Անդրանիկ պարտության հետեւանքով Հայաստանի տղամարդկանց հավաքականը վաստակած 11 միավորով նահանջեց 9-րդ հորիզոնական: 8-րդ տուրում մեր շախմատիստները կմրցեն լեհերի հետ: Աղյուսակը 13 միավորով գլխավորում են ուկրաինացիները, որոնք 2,5-1,5 հաշվով հաղթեցին վրացիներին: Թիմի հաղթանակն ապահովեց Վասիլի Իվանչուկը՝ պարտության մատնելով Ջոբավային: 12-ական միավորով հաջորդ տեղերում են Ռուսաստանի 1-ին, Հունգարիայի եւ Ադրբեջանի հավաքականները: Ռուսաստանի 1-ին հավաքականը 2,5-1,5 հաշվով հաղթեց իր 2-րդ թիմին: Հունգարացիներն էլ 3-1 հաշվով հաղթեցին բրազիլացիներին: Ահա եւս մի քանի արդյունքներ. ԱՄՆ-Լեհաստան՝ 2-2, Ռուսաստան-3-Իրան՝ 2-2, Չինաստան-Թուրքմենստան՝ 4-0, Բելառուս-Անգլիա՝ 3-1:

Հայաստանի կանանց հավաքականը 9 միավորով նահանջեց 19-րդ հորիզոնական: Հաջորդ մրցակիցը Իսրայելի հավաքականն է: 14 միավորով առաջատարը Ռուսաստանի 1-ին հավաքականն է, որը 4-0 հաշվով ջախջախեց հունգարուհիներին: 12-ական միավոր են վաստակել վրացիներն ու հնդիկները: Վրացիները հաղթեցին չինացիներին (2,5-1,5), հնդիկները նույնպիսի հաշվով պարտության մատնեցին ուկրաինուհիներին:

# «Բանանցը» պահպանեց առաջատարի դիրքը

**Երեկ «Հանրապետական» մարզադաշտում կայացած «Բանանց»-«Միկա» հանդիպումով ավարտվեց առաջնության 22-րդ տուրը: «Բանանցը» վերջին հանդիպումներում թանկարժեք միավորներ էր կորցրել, որի արդյունքում «Փյունիկը» հավասարվել էր իր գլխավոր մրցակցին: Իսկ ահա «Միկան» 5 անընդմեջ հաղթանակ էր տոնել ու հիանալի հնարավորություն էր ստացել պայքարելու բրոնզե մեդալների համար:**

**Հանդիպումն անցավ համառ ու հետաքրքրական պայքարում: Արդեն առաջին րոպեին փորձելով կասեցնել Օրտեգայի առաջխաղացումը, «Միկայի» դարպասապահ Գեւորգ Կասպարովը վայր գցեց «Բանանցի» հարձակվողին ու մրցավար Արման Ամիրխանյանը նշանակեց 11 մ հարված: Սակայն Սամվել Մելքոնյանը շատ անփույթ իրացրեց 11 մետրանոցը՝ բավական բարձր հարվածելով: Մեկ րոպե անց Մելքոնյանը կրկին կարող էր բացել հաշիվը, սակայն վրիպեց մոտ տարածությունից:**

**Այնուամենայնիվ, «Բանանցն» առաջինը հասավ հաջողության: 17-րդ րոպեին իր ակտիվ խաղով աչքի ընկնող Օրտեգան գեղեցիկ հարվածով խոցեց Կասպարովի դարպասը: Պատասխանը չուշացավ: 11 րոպե անց Բոտի Դեմելը հարվածային դիրք դուրս բերեց Նարեկ Բեգլարյանին եւ վերջինս հավասարեցրեց հաշիվը:**

**Հետագայում երկու թիմերն էլ գոլային պահեր ստեղծեցին: Կարող էին աչքի ընկնել Բոտի Դեմելը, Ջունիոր Կառլոսը, սակայն չօգտագործեցին գոլային պահերը: 2 անգամ էլ «Բանանցի» դարպասը կարող էր գրավել Նարեկ Բեգլարյանը: Առաջին դրվագում նրա հուժկու հարվածը ցնցեց հորիզոնական ձողը, իսկ 2-րդ դրվագում նա մենմենակ դուրս գալով դարպասապահի դիմաց ու շրջանցելով նրան, մի պահ հապաղեց եւ մրցակցի պաշտպաններին հաջողվեց չեզոքացնել վտանգը:**

**Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի: Սակայն հանդիպման վերջին րոպեին կրկին Օրտեգան սլացիկ ճեղքումով ներխուժեց տուգանային հրապարակ ու այս անգամ էլ «Միկայի» պաշտպանը խախտեց կանոնները: Կրկին նշանակվեց 11 մ հարված, որն այս անգամ անվրեպ իրացրեց «Բանանցի» ավագ Արթուր Ոսկանյանը՝ անչափ կարեւոր հաղթանակ պարգեւելով իր թիմին:**



**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բանանց | 22 | 16 | 4 | 2 | 49-20 | 52 |
| 2. Փյունիկ | 22 | 15 | 4 | 3 | 61-18 | 49 |
| 3. Ուլիս | 22 | 13 | 3 | 6 | 33-18 | 42 |
| 4. Միկա | 22 | 11 | 4 | 7 | 33-21 | 37 |
| 5. Իմպուլս | 22 | 7 | 6 | 9 | 20-36 | 27 |
| 6. Գանձասար | 22 | 7 | 2 | 13 | 19-31 | 23 |
| 7. Կիլիկիա | 22 | 4 | 3 | 15 | 18-47 | 15 |
| 8. Շիրակ | 22 | 1 | 2 | 19 | 13-55 | 5 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 15 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 12 |
| Էդուարդո դոս Սանթոս | «Բանանց» | 11 |
| Էդնեյ | «Միկա» | 8 |
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 7 |

# Պատանեկան հավաքականը կրկին ձախողվեց

Մինչեւ 17 տարեկանների Հայաստանի պատանեկան հավաքականին չհաջողվեց ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի առաջին փուլի արգելքը հաղթահարել: Սուրեն Չախալյանի սաներն Իսլանդիայում ընթացող ընտրական 7-րդ խմբի ավարտական խաղում 1-2 հաշվով զիջեցին տանտերերին:

Արդեն 2-րդ րոպեին իսլանդացի Ռագնար Բրագի Սվեյնսոնը գրավեց Գեւորգ Հարությունյանի պաշտպանած դարպասը: Մեր ֆուտբոլիստներից ընդամենը 10 րոպե պահանջվեց հավասարակշռությունը վերականգնելու համար: Աչքի ընկավ Նաիրի Մինասյանը: Սակայն 53-րդ րոպեին ՀՀ հավաքականի դարպասին 11 մ հարված նշանակվեց եւ Օլիվեր Սիգուրյոնսոնը խփեց հաղթական գնդակը:

Խմբային մրցաշարի մյուս խաղում թուրքերը 6-1 հաշվով ջախջախեցին չեխերին: Այսպիսով, հաջորդ փուլում պայքարը շարունակելու իրավունք ստացան Իսլանդիայի եւ Թուրքիայի հավաքականները: Հիշեցնենք, որ առաջին խաղում մեր պատանիները 0-3 հաշվով զիջել էին թուրքերին, հաջորդ հանդիպումը չեխերի հետ ավարտել էին ոչ-ոքի (1-1):

Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իսլանդիա | 3 | 2 | 0 | 1 | 6-5 | 6 |
| 2. Թուրքիա | 3 | 2 | 0 | 1 | 9-3 | 6 |
| 3. Չեխիա | 3 | 1 | 1 | 1 | 6-9 | 4 |
| 4. Հայաստան | 3 | 0 | 1 | 2 | 2-6 | 1 |

*ԲԱԹՈՒՄ*

# Պատանի շախմատիստներից երեքը Եվրոպայի փոխչեմպիոններ

**Բաթումում վերջնագիծը հատեց շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունը, որն անցկացվեց տարիքային 6 խմբերով: Հայաստանի 48 պատվիրակներից երեքին հաջողվեց դառնալ մրցանակակիր՝ արժանանալով արծաթե մեդալի:**



**Սամվել Տեր-Պետրոսյան**

**Չեմպիոնի կոչմանը շատ մոտ էր մինչեւ 18 տարեկանների պատանիների Եվրոպայի անցյալ տարվա չեմպիոն Սամվել Տեր-Սահակյանը: Ավարտական տուրից առաջ նա ադրբեջանցի Վասիֆ Դուրարբեյլիի հետ գլխավորում էր աղյուսակը: Վերջին տուրում երկուսն էլ հաղթեցին: Հայ շախմատիստը պարտության մատնեց ադրբեջանցի Այազ Մամեդովին եւ 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, միայն լրացուցիչ գործակիցներով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը զիջեց ադրբեջանցի մեկ այլ շախմատիստի՝ Վասիֆ Դուրարբեյլիին:**

**Մինչեւ 16 տարեկան պատանիների մրցաշարում էլ գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը ձեռքից բաց թողեց չեմպիոն դառնալու հիանալի հնարավորությունը: Վերջին տուրում նա ոչ-ոքի խաղաց Դմիտրի Դանիլենկոյի հետ ու վաստակեց 7 միավոր: Նույնքան միավոր վաստակած ռուսաստանցի Իվան Բուկավշինը հայ շախմատիստին գերազանցեց գործակիցներով եւ դարձավ չեմպիոն: Գրիգորյանը ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով:**

**Հայաստանից 3-րդ արծաթե մեդալը նվաճեց ամենակրտսեր մասնակիցներից մեկը՝ 8-ամյա Շանթ Սարգսյանը: Նա վերջին տուրում հաղթեց ուկրաինացի Կիրիլ Շեւչենկոյին եւ վաստակեց 7,5 միավոր: Չեմպիոնի տիտղոսը նվաճեց ադրբեջանցի Աբդուլա Գադիմբայլին, որը վաստակեց 8 միավոր: Ի դեպ, միակ պարտությունը Սարգսյանը կրել էր հենց ադրբեջանցուց 4-րդ տուրում:**

**Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքի հասավ Մարիա Գեւորգյանը՝ 6 միավորով մինչեւ 16 տարեկանների մրցաշարում գրավելով 7-րդ տեղը:**

# «Հասիսն» առաջին հաղթանակը տոնեց

**Կուրսկում անցկացվող բասկետբոլի միջազգային մրցաշարի 2-րդ խաղում «Հասիսն» անդրանիկ հաղթանակը տոնեց՝ 65-47 հաշվով առավելության հասնելով Վոլգոգրադի «Չեւակասայի» նկատմամբ: «Հասիսի» կազմում ամենաարդյունավետն Ամանդա Զեքսոնն էր, որը թիմին 22 միավոր պարգեւեց: Այսօր «Հասիսը» կմրցի Կիեւի թիմի հետ:**

# Ալոնսոն կրկին լավագույնն է

**«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության 15-րդ փուլն անցկացվեց Սինգապուրում: Ինչպես եւ նախորդ փուլում, այս անգամ էլ հաղթող ճանաչվեց Ֆեռնանդո Ալոնսոն: Այս հաղթանակի շնորհիվ նա առաջնության ընդհանուր հաշվարկում շրջանցելով Լուիս Հեմիլտոնին, տեղափոխվեց 2-րդ հորիզոնական: Ալոնսոն վաստակել է 191 միավոր: Իսկ ահա մրցավազքը 3-րդն ավարտած Մարկ Ուեբերն ամրապնդեց առաջատարի իր դիրքը՝ միավորների քանակը հասցնելով 202-ի: Լավագույն եռյակը եզրափակում է Լուիս Հեմիլտոնը (182 միավոր), որին այս անգամ չհաջողվեց հատել վերջնագիծը:**

**«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում «Ռեդ Բուլը» զգալիորեն ավելացրեց առավելությունը «Մակլարենի» նկատմամբ: «Ռեդ Բուլն» այժմ ունի 383 միավոր, «Մակլարենը» 359 միավորով 2-րդ տեղում է: Եռյակը 316 միավորով եզրափակում է «Ֆերարին»:**

# Մոուրինյուն հավատարիմ է «Ռեալին»

**Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն հրաժարվել է թեկուզ 2 խաղով գլխավորելու Պորտուգալիայի հավաքականը: Նա գտնում է, որ ակումբի ղեկավարությունը, ֆուտբոլիստներն ու ֆուտբոլասերները բացասաբար կվերաբերվեն թիմից իր ժամանակավոր բացակայությանը:**

**«Պորտուգալիայի նկատմամբ անձնական սերը եւ իմ հպարտության պատճառով չեմ կարող մերժել առաջարկը, սակայն նաեւ չեմ կարող այո ասել: Զգում եմ, որ «Ռեալի» հանդեպ դա սխալ մոտեցում կլինի: Ուստի այդ հարցը համարում եմ փակված», նշել է Մոուրինյուն:**

**Հիշեցնենք, որ Պորտուգալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ժիլբերտո Մադաիլը մինչ այդ հայտարարել էր, որ Մադրիդի «Ռեալի» ղեկավարությունը դեմ չէ, որպեսզի Մոուրինյուն ժամանակավորապես գլխավորի երկրի ազգային հավաքականը:**

# Մարադոնան ցանկանում է վերադառնալ հավաքական

**Դիեգո Մարադոնան ցանկանում է կրկին վերադառնալ Արգենտինայի հավաքական, որի գլխավոր մարզչի պաշտոնից հեռացել էր ֆուտբոլի աշխարհի առաջնությունից հետո: Հավաքականից հեռանալու պատճառն այն էր, որ Մարադոնան չցանկացավ աշխատել նոր օգնականների հետ, որոնց պետք է նշանակեր ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը:**

**Եվ ահա այժմ նա հայտարարել է, որ պատրաստ է հավաքականում աշխատել առանց իր օգնականներ Ալեխանդրո Մանկուսոյի եւ Հեկտոր Էնրիկեի: Դեռեւս այն ժամանակ Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Խուլիո Գրոնդոնան հայտարարել էր, որ Մարադոնան հնարավորություն ունի վերադառնալու հավաքական, եթե նա համաձայնվի մարզչական շտաբում կատարվելիք փոփոխությունների հետ:**

**Հիշեցնենք, որ Մարադոնան Արգենտինայի հավաքականի ղեկը ստանձնել էր 2008-ի աշնանը: Նրա գլխավորությամբ արգենտինացիները ՀԱՀ-ում կայացած աշխարհի առաջնությունում հասան մինչեւ քառորդ եզրափակիչ, որտեղ 0-4 հաշվով պարտվեցին գերմանացիներին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# 2020-ին անտառ չենք ունենա

2009 թ. գարնանը «Ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի» իրականացրած հետազոտության հիմնական նպատակն էր պարզել, թե անտառամերձ տարածքներում ապրող բնակչության համար ինչպիսի նշանակություն ունի վառելիքը: Հետազոտությունները իրականացվել են Սյունիքի, Տավուշի եւ Լոռու 8 բնակավայրերում:

Ազգագրագետ **Հրանուշ Խառատյանի** մեկնաբանությամբ՝ վերոնշյալ բնակավայրերի բնակիչները փորձել են որոշ ժամանակ ջեռուցումն իրականացնել գազով, սակայն գազի թանկացման պատճառով զգալիորեն կրճատվել են գազի օգտագործման ծավալները: Գյուղացիները զուգահեռաբար տանը փայտի վառարաններ են դնում, որպեսզի ծախսերը քիչ լինեն:

Նշված մարզերի անտառամերձ բնակավայրերի բնակիչների շրջանում իրականացված հետազոտության համաձայն՝ բնակչությունը գրեթե պատկերացում չունի, թե ինչպես է կառավարվում անտառը, հաճախ անտառապետներն էլ այս խնդիրներից տեղյակ չեն:

«Էկոլուր» ՀԿ-ի նախագահ **Ինգա Զառաֆյանի** փոխանցմամբ՝ անտառահատումների վերաբերյալ պաշտոնական եւ ոչ պաշտոնական տվյալները չեն համապատասխանում միմյանց: Օրինակ՝ գյուղնախարարության պաշտոնական կայքում տեղադրված թիվը, թե ՀՀ ողջ տարածքի 17.2 տոկոսն է անտառածածկ, 1992 թ. տվյալ է: Տարիների ընթացքում թվերը փոխվել են, սակայն պաշտոնյաները չեն ցանկանում այդ փաստը ընդունել: Հայաստանի ամերիկյան համալսարանի 2006 թ. կատարած հետազոտության համաձայն՝ ՀՀ անտառածածկ տարածքը կազմում է 7.8 տոկոս: Եթե անտառի հանդեպ ներկայիս «ջերմ» վերաբերմունքը շարունակվի, եւ ապօրինի անտառահատումների դեմ ոչինչ չձեռնարկվի, ապա մասնագետները կանխատեսում են, որ 2020-ին Հայաստանում անտառ չի մնա: Ի տարբերություն պաշտոնյաների, որ որեւէ լուծում չեն առաջարկում, բնապահպանները նշում են, որ անապատացումից խուսափելու միակ տարբերակը 5 տարի ժամկետով անգամ սանիտարական անտառահատումների արգելումն է:

«Եթե Հայաստանը անտառը կորցնի, կորցնում ենք մեր ջրային ռեսուրսները, հողը, մեզ արդեն սպառնում է անապատացման վտանգը: Հանքավանում հայտնաբերել էինք ծառահատում: Պարզվում է՝ այն, ինչ մենք տեսնում ենք որպես անտառ, կադաստրով անտառ չէ: Պարզվեց, որ 50.000 հեկտար դուրս է բերվել անտառային ֆոնդից եւ տրվել համայնքներին: Համայնքներն էլ վաճառել են անհայտ անձանց», «Հետարան» ակումբում երեկ ասաց Ինգա Զառաֆյանը՝ հավելելով, որ 2003-ի դեկտեմբերի 4-ի 1328 որոշմամբ՝ 500 հեկտար օտարվել եւ վաճառվել է:

Հ. Հ.

# Երեւանցիների ջրի հաշվին դելֆինարիա են կառուցում



Կոմիտասի այգու հարեւանությամբ դելֆինարիայի կառուցման կապակցությամբ «Թռչնասերների կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Սիլվա Ադամյանը** պատրաստվում է դիմել Երեւանի քաղաքապետարան եւ բնապահպանության նախարարություն՝ պահանջով՝ ներկայացնել դելֆիններ Հայաստան ներկրելու թույլտվության փաստաթղթերը: Դելֆինարիա կառուցելու վերաբերյալ հասարակական լսումներ չեն անցկացվել: «Լսումներ չեն անցկացրել, գաղափար չունենք ոչ մի բանից: Կենդանաբանության ինստիտուտը պետք է չիմանա՞ր այդ մասին: Մեր կլիմայական պայմանները թույլ չեն տալիս այստեղ դելֆինարիա կառուցել, դրա համար էքսպերտի կարծիք է հարկավոր: Դա կենդանիների շահագործում է», «Էկոլուրին» ասել է Սիլվա Ադամյանը:

ՄԱԿ-ի փորձագետ **Քնարիկ Հովհաննիսյանի** մեկնաբանությամբ՝ դելֆիններին պահելու համար անհրաժեշտ է 1500 խմ խմելու ջուր, որը շրջանառու ջրամատակարարման միջոցով պետք է թարմացվի:

Հովհաննիսյանի տեղեկություններով՝ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը դելֆինարիայի կառուցման վերաբերյալ գրություն չի ստացել, ինչից կարելի է ենթադրել, որ ջուրը մատակարարելու է «Երեւան ջուր» ընկերությունը: Փաստորեն ստացվում է, որ երեւանցիների խմելու ջրի հաշվին դելֆինարիա են կառուցում: Բնապահպանների ունեցած տեղեկությունների համաձայն դելֆինարիան կառուցում է Երեւանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանը: Դելֆիններ Օդեսայից են ներկրելու:

Հ. Հ.

# ՀՅԴ-ն միջոցառումը չի հետաձգում

**ՀՀ վարչական դատարանը մերժել է ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հայցը: ՀՅԴ Արագածոտնի մարզային կառույցը Աշտարակի քաղաքապետարանին իրազեկել էր քաղաքում հանրահավաք անցկացնելու մասին եւ մերժում ստացել: Հիմք ընդունելով ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին օրենքը, ՀՅԴ Գերագույն մարմինը Վարչական դատարանում բողոքարկել էր Աշտարակի քաղաքապետի սեպտեմբերի 24-ի որոշումը՝ այն անվավեր ճանաչելու պահանջով: Պատասխանող կողմը՝ Աշտարակի փոխքաղաքապետ Հրաչիկ Խաչատրյանը, դատական նիստին իր «հիմնավորումներով» փաստել է իրազեկման մերժման անհիմնությունը: Ավելի ուշ, երբ հայտնի է դարձել, որ ՀՅԴ Գերագույն մարմինը հայցադիմում է ներկայացրել դատարան, փոխքաղաքապետը դիմել է մարզի ոստիկանության օգնությանը՝ մերժումը հիմնավորելու համար: Դատավորի հարցին, թե ինչո՞ւ եք առաջարկել հանդիպում, այլ ոչ թե հանրահավաք, քաղաքապետի ներկայացուցիչը զավեշտ պատասխան է տվել, ասելով՝ «բառախաղության հետեւից չենք ընկել»:**

**ՀՀ վարչական դատարանը՝ դատավոր Լարիսա Սույանի նախագահությամբ, կայացրած վճռով մերժել է ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հայցը:**

**ՀՅԴ Գերագույն մարմինը տեղեկացնում է, որ չնայած դատարանի որոշմանը, նախապես հայտարարված միջոցառումը չի հետաձգվելու, եւ այն կկայանա սեպտեմբերի 29-ին, ժամը՝ 17:00-ին, Աշտարակի մշակույթի տանը հարող հրապարակում:**

ՀՅԴ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

# Առողջ ապրելակերպը մեր իրականությունում

Orange Fitness & Tennis ակումբը հայտարարում է մրցույթ առողջ ապրելակերպի թեմայով, որին կարող են մասնակցել բոլոր օրաթերթերը, ռադիոկայանները, ինտերնետային կայքերն ու անհատ լրագրողները: Հոկտեմբերի 1-15-ը այս թեմայով տպագրված հոդվածներից (նյութերը պետք է ուղարկվեն նաեւ marketing@orangefit.am հասցեին) կընտրվի լավագույնը: Հաղթող լրագրողը կամ օրաթերթը կստանա Orange Fitness-ի ակումբային քարտ եւ կունենա հնարավորություն անսահմանափակ օգտվելու ակումբի ծառայություններից:

Մրցույթն իրականացվում է Orange Fitness ակումբի երկամյակի շրջանակներում:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

# «Լիբանանի հայերը»՝ դասախոսության թեմա Բելմոնտում

**Ամերիկայի «Հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիան» (ՀՈՒՀԱԱ), ըստ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրության, հոկտեմբերի 7-ին հրավիրել է դոկտ. Աիդա Բուջիկանյանին դասախոսություն կարդալու «Լիբանանի հայերը» թեմայով Բելմոնտի (Մասաչուսեթս) իր կենտրոնատեղիում: Միաժամանակ տեղի է ունենալու Բուջիկանյանի խմբագրությամբ, Հայկազյան համալսարանի եւ ՀՈՒՀԱԱ-ի «Հայկական ժառանգություն» հրատարակչության կողմից լույս տեսած «Լիբանանի հայերը: Անցյալի իշխանուհիներից եւ փախստականներից մինչեւ մեր օրերի համայնքը» գրքի շնորհանդեսը ամերիկյան մայրցամաքում:**

**Գիրքը, որի նախաբանը գրել է դոկտ. Բուջիկանյանը, պարունակում է 2005 թվին Հայկազյան համալսարանի հիմնադրման 50-ամյակի առնչությամբ կայացած կոնֆերանսի («Լիբանանի հայերը: Անցյալն ու ներկան», կազմակերպիչ՝ դոկտ. Արա Սանջյան) նյութերը եւ Բեյրութում հրատարակվել էր այս տարվա ապրիլին:**

**506-էջանոց հատորը թեմատիկ եւ ժամանակագրական 8 մասերի է բաժանված, որոնք ընդգրկված են 14 գլուխներում, 7-ը՝ անգլերեն, 4-ը՝ ֆրանսերեն եւ 3-ը՝ հայերեն լեզուներով, ըստ կոնֆերանսում կարդացված բնագրերի: Ներկայացված են հակիրճ թարգմանությունները տեքստերի եւ կենսագրական տեղեկությունների հեղինակների մասին:**

**Դոկտ. Բուջիկանյանը ծնունդով Լիբանանից է, բայց ներկայումս ապրում է Մոնրեալում: Մագիստրոսի աստիճան ստանալու համար ուսումնասիրել է Լիբանանի հայ համայնքի պատմությունը, իսկ դոկտորականի համար՝ Լիոնի (Ֆրանսիա) եւ Մոնրեալի հայկական համայնքների պատմությունը:**

**Գիրքը սփյուռքի կարեւորագույն օջախներից մեկի հարուստ մշակույթի եւ կենսունակության «եզակի գանձարան» կարելի է համարել: Հավելյալ տեղեկությունների համար խորհուրդ է տրվում այցելել hg@naasr.org կայքը:**

Հ. Ծ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

### Մրցույթի ծածկագիրը՝ ՀՀ/ՇՄՄ-1/10

Պատվիրատու՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը /ք. Երեւան, Կառավարական 3-րդ շենք/, հայտարարում է բաց մրցույթ, որն անցկացվելու է մեկ փուլով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր:

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

Մրցույթի հրավեր ստանալու համար անհրաժեշտ է փոխանցել 20.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին եւ դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ ս.թ. հոկտեմբերի 04-ից մինչեւ ս. թ. հոկտեմբերի 27-ը, ժամը 10.00-ից մինչեւ 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գեւորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ մրցույթի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն մրցույթի հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մրցույթի հայտերը՝ կազմված հայերեն, անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ հասցեով՝ մինչեւ ս. թ. հոկտեմբերի 29-ը, ժ. 11.00-ն:

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

## Մրցանակների հանձնում

Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունը մշակութասեր հասարակությանը հրավիրում է մասնակցելու Թեքեյան մշակութային միության

### «Հայկաշեն Ուզունյան»

մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը, որը տեղի կունենա 2010 թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 17.00-ին, Թեքեյան կենտրոնում (Խանջյան 50):

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<Զարգացման Հայկական Բանկ>> ԲԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Հողամաս: Ընդհանուր մակերեսը 0,5 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Նորք-Մարաշ վարչական շրջ., Նորքի այգիներ թիվ 227/20: Մեկն. գինը՝ 154310000 ՀՀ դրամ:

- Բնակարան եւ ձեղնահարկ: Ընդհանուր մակերեսը՝ 312,7 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն վարչական շրջ., Թումանյան փող., 32 շենք, թիվ 13: Մեկն. գինը՝153350000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 29.10.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: